

مجلة آویدارانی تساین



ՈՉ-ՅԱՐԱՆՈՒՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԼ ԿԹՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Թ. ՏԱՐԻ — ՅՈՒԼԻՍ — ՕԳՈՍՏՈՍ 1947 — ԹԻԻ 7-8



Ողբ. Տիկ. Ս. Նորասուցեան
(Տե՛ս յօդուած էջ 113ր)

ԿԱՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

1.— Մեր նշանաբանը. — Էական կէտերու մէջ միութիւն, ոչ էա կան կէտերու մէջ ազատութիւն, իսկ ամեն բանի մէջ սէր: — *Օգոստինոս*

2.— Նպատակը. — Մառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայա-
րիլ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշանաբանները, Քրիս-
տոսի ձրի փրկութիւնը քաղաքացիական արեւան շնորհիւ: Շեշտել ապաւիտա-
րութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագա-
ւորութիւնը մտնելու: Մղել փրկումները սրբազործուած կեանքի եւ
այսպէս պատրաստել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3.— Դաւանանքը. — Կը հաւատայ (1) Ս. Գրոց Աստուծոյ ներշնչ-
եալ, անսխալական եւ հաւատքի ու կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ա-
մենասուրբ Յրոգութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Ս. Հոգ-
ւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Մեղքի: (6) Ս. Հոգիով մկր-
տուած կեանքի: (7) Մեր Տէրոջ Կրկին, անձամբ վերադարձին: (8) Մե-
ռելներու յարութեան: (9) Ընդհանուր դատաստանի: (10) Մրցոյ՝ Քրիս-
տոսի հետ բազաւորութեան: (11) Ներկեմքի եւ դժոխքի: (12) Մասնա-
յին անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13)
Արդարեւրոն համար յաւիտեան կեանքի, իսկ մեղաւորներուն հա-
մար՝ յաւիտեան սանջտանքի: (14) Նկեղեցւոյ միասնականութեան եւ
անոր վերջնական յաղթանակին:

4.— Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնա-
կան ամսաթերթ, հայերէն եւ հայաստն քրքերէն լեզուներով:

5.— Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6.— Յօդուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի
անձնական փորձառութիւնը եւ զուրսէն եղողներէն ալ բարի վկա-
յութիւն ունին. կը յարգեն թերթին ուղղութիւնը եւ զրկուած յօդուա-
ծներ կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7.— Թերթիս սիւնակները տամադրելի չեն վիճաբանական նիւ-
թերու համար եթէ անոնք պարզապէս վեճեր յարուցանելու կը ծա-
ծայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8.— Չհրատարակուած յօդուածները չեն վերադարձուիր:

9.— Բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ վեց ամիսէն նուազ
պայմանաժամով բաժանորդագրութիւն չընդունուիր:

10.— Սղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանե-
լու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՅ - ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամոնաւեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —: — Propr: Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝ $\left\{ \begin{array}{l} \text{Վեր. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ} \\ \text{Վեր. Թ. ԵՆՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ} \\ \text{Պր. Կ. Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ} \end{array} \right.$

Թ. ՏԱՐԻ — ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ 1947 — ԹԻԻ 7—8

ՔԱՂՅՐ ԸԼԼԱԼՈՒՆ ԱՐԺԷՔԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Շատ մը մայրերու սիրտը յուզած է միւս գեղեցիկ եւ սրտանմիկ տողերը.—

«Ո՛հ, սա փոքրիկը — չկրցայ քնացնել զինքը»:

Եւ մայրը հառաչեց, երբ մանկիկը

Դառնալով ասդ ու անդ կուլար,

Ու կը նեղէր մայրը՝ անդադար:

«Ո՛հ, սա փոքրիկը — չկրցայ քնացնել զինքը»:

Ո՛հ, սա փոքրիկը, սակայն տե՛ս մօրը արցունքը,

Զի տխուր գիշեր մը, զայն կորսնցուց.

Տէրը համբուրեց պզտիկը ... և քնացուց:

«Ո՛հ սա փոքրիկը» — այլեւս չկար,

Ոչ ալ զայն քնացնելու հոգը կար...

Իմաստը սա է: Գիշերները անքուն անցնելու ստիպուած մայր մը կը գանգատի իր մանկիկէն. կը հառաչէ, կը տառապի, որովհետեւ չքնանար: Օր մը Տէրը կուգայ եւ զայն կը քնացնէ ... այլեւս կը քնանայ մանկիկը եւ չարթննար: Մօրը սիրտը ամալի է ու անապատ դարձած...: Կ'արժէ՞ր տրտնջալ, դառնանալ երբ մանկիկը այնքա՛ն կարճ ժամանակ պիտի մնար հետը: Ո՛հ, մայրը չէր գիտեր, անշուշտ, թէ քանի մը օրուան հիւր էր անիկա: Սակայն մահը միշտ հաշուի մէջ ըլլալու է: Տարիքի եւ գիրքի խտիր չկայ դժխեմ մահուան քով:

Մահուան գերանդին կը հնճէ մարդոց մէջէն մատղաշ տունկերն ու նորափրիկ կոկոնները նաեւ:

Սակայն մեր կուրծքին վրայ սեղմած կամ օրօրոցին մէջ երգելով քնացուցած սիրուն փոքրիկները չեն միայն որ առարկայ դառնալու են մեր քաղցր վերաբերումներուն, այլ կան նաեւ ծերունի հայրեր եւ մայրեր ալ որոնք կարօտ են, մինչեւ իսկ ծարաւի են մեր սիրոյն եւ քաղցրութեան: Հոս շատեր կը ճախողին, որովհետեւ տան մէջ առհասարակ անբաղձալի են անոնք: Մենք ակամատես եղած ենք այսպիսի անխիղճ վերաբերումներու առարկայ դարձած ծերունի: Տակաւին մի քանի օր առաջ այդ դժբախտ արարածներէն մէկը մեր դիմացը ելաւ: Ութսունը անց ծերունի մըն էր: Անուրբին տակ ծրարեր էր չոր հաց մը, կը տանէր բաժնելու իր կնկան հետ, մինչդեռ ունէր խնայողական սնտուկին մէջ քանի մը հարիւր ոսկի, զոր անխիղճ տղան իւրացուցած՝ չէր տար իր հօրը եւ այս պարագան մեզի կը յիշէր ծեր մարդը փղձկելով: Տղան նիւթական վիճակը լաւ է, հակառակ ասոր, ոչ թէ ծնողաց հանդէպ իր պարտականութիւնը չէր կատարէր, այլ՝ հայրը արդար իրաւունքէն ալ կը զրկէր... Շատեր կան այդպէս, երեսի վրայ լքուած, ոմանք առաժճին տուններու մէջ, ոմանք անկելանոցներու մէջ, զրկուած ընտանեկան հանգստաւետ պայմաններէն: Անոնք իրաւունք չունին իրենց վերջին օրերը անցնելու այն գաւակներուն քով, որոնց համար անոնք անհնարին զոհողութիւններու ենթարկուած են: Այսօրուան ծերերը, ժամանակ մը կար որ անոնք սիրած էին այդ գաւակները իրենց հոգիին պէս, ինչպէս որ իրենք այսօր կը սիրեն իրենցները: Անոնց թեւերուն մէջ մեծցած են: Սոյն թեւերը որպէս նեցուկ եղած է իրենց, թեպէտ այժմ անգօրութեան մատնուած: Անոնք ալ կարօտը կը քաշեն սիրալիք վերաբերումի. քաղցր խօսքերու: Անոնք տխուր են կամ ուրախ, իրենց հանդէպ գաւակներուն բռնած դիրքովը: Ասիկա կ'արժէ վերլիշել տալ այնպիսիներուն համար որոնք սկսած են կեանքի վայրէջքին: Այս պարագան կարեւոր է գաւակներուն մանաւանդ անոր համար որ երբ այդ ծերերը հողը քաշեն իրենց գլխուն, ծնողաց հանդէպ քաղցր ջրլալու տխուր յուշերը մինչեւ կեանքերնին վերջը չի չարջրկէ այդպիսիները: Հետեւեալ տողերը նշանակալից են այս տեսակետէն.

«Վաղը պիտի զղչաւ, ողբաս,
Որ ծերունիին գէժքը կծկուեցաւ,
Որպէս թէ կերաւ մի ապտակ
Երբ խօսեցար խիստ, անգիտակ»

«Զղջու՛մ վաղը, յիրաւի
Աւելի աղէկ է, և նախընտրելի
Որ չունենայ մարդ յանցանք քաւելի,
Ոչ ալ մեղք՝ տանող զղջումի»

Եւ տակաւին կայ ամուսիններու պարագան: Շատ մը տուններու մէջ այր ու կնկան միջեւ անպակաս են կազ ու կռիւներ: Տան մէջ սերը դռնէն թէ պատուհանէն խոյս տուած է: Փոքր եւ անկարեւոր խնդիրներ վրդոված է տան խաղաղութիւնը եւ խանգարած սիրովի յարաբերութիւնը: Այսօր բազում ընտանեկան յարկեր, փոխանակ սիրոյ բոյներ դառնալու, դժուրի վերածուած են: Կարելիութիւն չկա՞ր արգիլելու այս դժբախտութիւնը: Անտարակոյս կար, եթէ ամուսիններ հոգ տանէին քաղցր ըլլալու իրարու հանդէպ, եւ չափ դնէին կիրքերու եւ զգացումներու: Մենք գիտենք այնպիսիներ որոնք դառնօրէն լացած

ԻՆՉՊԷՍ ՊԱՏՈՒԵՄ ՓՐԿԻՉԸ ԱՅՍՈՐ

Գիշերուան հանգիստ քունէն արթնցած, մարմինով, մտքով և հոգիով զօրութիւն և թարմութիւն զգեցած, աշխարհի բազմազան զբաղմունքներուն մուտք գործելէ առաջ, կ'արժէ որ քանի մը բոպէներ ամէն մէկ հաւատացեալ աղօթքի ու Սբ. Գրոց ընթերցման համար առանձնութեան քաշուած պոհուն ինքնիրեն ուղղէ սա կարեւոր և լուրջ հարցումը. «Ինչպէ՞ս պատուեմ Փրկիչս այսօր»։ Միթէ աս պէտք չէ՝ որ ըլլայ հաւատացեալին հոգւոյն բաղձաւորը, և ունոր կեանքին ու գործունէութեան միակ նպատակը։ Ուրեմն ի՞նչպէս չի ջանանք պատուել Չայն որ սրբած ըլլալով մեզ մեր բոլոր մեղքերէն իր մաքրող պատուական տրիւնովը՝ ազատած է մեզ մեր գալիք տրժանի պատիժէն — դժոխքի յաւիտենական տանջանքէն։ Մեր Փրկչին հանդէպ

մեր ունեցած պարատուութիւնները ա՛յնքան անհուն և մեր երախտագիտութիւնը ա՛յնքան անսահման են որ, մեր կեանքի բոլոր վայրկեանները պէտք է ապրինք ու գործենք միայն Անոր փառքին համար։

Ես՝ որպէս ճշմարիտ հաւատացեալ մը, կրնամ, և նաեւ պարտական եմ այսօր պատուելու Փրկիչը, հակառակ պարագային, անտարբեր գտնուելով իր անձին հանդէպ, անտրգած կ'ըլլամ Չինք, տրտմեցուցած՝ Ս. Հոգին, յանցանքով բեռնաւորած՝ խղճատանքս, և և այս կերպով վնասած կ'ըլլամ Աստուծոյ գործին։ Ուստի՝ անկեղծ սրտով ու ջերմեռանդ հոգիով թող ամէն մէկ հաւատացեալ ուղղէ այս հարցումը ինքնիրեն։

ԻՆՉՊԷՍ ՊԱՏՈՒԵՄ ՓՐԿԻՉՍ ԱՅՍՈՐ.

1. Նախ Քրիստոսի հանդէպ ունեցած նուիրումս պէտք է նորոգեմ կրկին անգամ։ Պէտք է իրեն յանձնուիմ բոլոր անձովս, մարմինով, մտ-

եմ իրենց ամուսիններուն հոգակոյտին վրայ, որովհետեւ քաղցր չեն եղած անոնց կենդանութեան ատենը։ Լացած եւ գոված են մեռնողին բարձր արժանիքները, զորս կարող չեմ եղած գնահատել ժամանակին ... այժմ որ անոնք զացե՛ր են անվերադարձօրէն՝ կ'ողբան դառնագին իրենց անուշայ արարքներուն համար։

Պարագան միեւնոյնն է երկու բարեկամներու միջեւ։ Յաջալի չորրը որով կը ցանե ոչ թէ միայն երկու ամուսիններու միջեւ, այլ երկու մտերիմ բարեկամներու մէջ ալ։ Ահա անոնք կ'սկսին անվստահութեամբ նայիլ իրարու։ Միեւնե խի իրերու դժբախտ բերումով երեկուան բարեկամներ՝ կ'ըլլան իրարու անողոր հակառակորդներ։

Սիրելի ընթերցո՛ղ ամենը կը կարօտին մեր սիրուն եւ քաղցրութեան։ Ինչպէս մեկը ըսած է, «Աշխարհ կը մեռնի մի քիչ սիրոյ համար», եւ ասիկա ճշմարիտ է։ Տէրը գիտնալով արժեքը քաղցր ըլլալու, իրարու հանդէպ, պատուիրած է մեզի ըսելով՝

«Իրարու հետ քաղցր եղէք» (Եփես. 4:32):

«Ձեր քաղցրութիւնը բոլոր մարդոց յայտնի ըլլայ» (Փիլ. 4:5):

«Ձեր վրայ հանգչի քաղցրութիւնը» (Կող. 3:12):

Խ. Թ. Ս.

քով ու հոգիով ժամանակս, տաղանդ-
ներս ու ստացուածքս օրհնեալ Փրկ-
չիս տալեւ պէտք է ներկայացնեմ ու
խնդրեմ իրմէ որ զանոնք ընդունի, նաեւ
պէտք է աղաչեմ որ տայ ինձ շնորհք
զանոնք իրեն համար պահելու, և նը-
կատելով իբրեւ իբեւ գործածելու
զանոնք իր փառքին համար: Մեր Տէ-
րը ոչ թէ միայն մեր տնձր գնեց իր
պատուական արիւնովը, հապա մեր
տնձր գնելով միտսին տէր եղաւ մեր
ստացուածքներուն ալ: Ուստի, մենք՝
ոչ թէ միայն մեր անձին տէրը չենք,
հապա նաեւ մեր ունեցածներուն ալ
տէրը չենք: Մենք Տէրոջն ենք, և
ինչպէս Դաւիթ մարգարէն տաճարին
չիտւթեան համար առատ բարիքներ
բերած առնելը ըսաւ «Բուկիճնեհ
ֆեզի ռուիւֆ», նոյնպէս ալ մենք մեր
բոլոր ունեցածները իրենք պէտք է
նկատենք: Թող մեր աղօթքը ըլլայ.
Ո՛վ Ս. Հոգի, շնորհէ որ բոլոր անձս
ու ստացուածքս, նաեւ ինծի սիրական
ու պատուական եղող բոլոր թանկա-
զին բաներս օրէ օր Փրկչիս նուիրելով
գործածեմ զանոնք իր փառքին հա-
մար:

2. Օրուայ ընթացքին պէտք է
Քրիստոսի նայիմ բոլոր կարիքներուս
համար՝ նիւթական և հոգեւոր կեան-
քի պարագաները այնպիսի անակնկալ
ղէպքերու առջեւ կը դնեն զիս որ այ-
լազան պէտքեր կ'աւնենամ, սակայն
Փրկիչը կարող է ու կը կամի զանոնք
լեցնելու: Զի կայ, ոեւէ օրհնութիւն
մը որուն պէտք ունենամ և Քրիստո-
սով պակսի ան: Ան է տուիչը բոլոր
կարիքներու, ու պատրաստ է տալու
առատապէս իրմէ հաւատքով խնդրող
ներուն: Ան ըսաւ. «Ամէն բան ինծի
ստուեցաւ իմ Հօրմէս», դարձեալ «Իմ
անունովս ինչ որ խնդրեմ պիտի կա-

սարեմ զանիկա»: Ուստի ինծի համար
մեծ առանձնաշնորհում մը կը նկատեմ
Քրիստոսի դիմել երբոր ոեւէ բանի մը
կարօտիմ: Աստուծոյ գանձատունը՝
Քրիստոսով ինծի տրամադրուած է,
հաւատքով ինչ որ խնդրեմ ինծի պի-
տի շնորհուի: Սակայն փոխանակ ի-
րեն երթալու, եթէ երթամ մահկանա-
ցու մարդոց, փոխանակ իրեն նայելու
ապաւինեմ ուրիշ միջոցներու, միթէ
անարգած ու անպատուած չե՛մ ըլլար
Զինքը: Պէտք է շարունակ իրեն նա-
յիմ աղօթքով՝ հոգեւոր ու նիւթական
բոլոր մանրամասն ու ամենափոքր կա-
րիքներու համար, ու ասիկա պատե-
հութիւններ ստեղծած պիտի ըլլայ ի-
րեն հետ շարունակ յարաբերութեան
մէջ մտնելու, «Անդադար աղօթք ընե-
լու» և «Ամէն բանի մէջ գոհութիւն
տալու»:

3. Օրուայ ընթացքին պէտք
է Յիսուսի նմանիմ բոլոր գործերուս
և խօսքերուս մէջ: Ան իմ կիսնքիս
միտկ օրինակն է. պէտք է իրեն նմա-
նիմ: Պէտք է խորհիմ իր խորհածին
պէս, խօսիմ իր խօսածին պէս, զգամ
իր զգացածին պէս ու գործեմ իր
գործածին պէս: Յաճախ պէտք է ես
ինծի ուղղեմ սա հարցումը թէ՝ «Այս
ինչ պարագային մէջ Յիսուսի նման
էի: Ան իմ ցոյց տուած կերպիս պիտի
հաւանէ՞ր, Ան ինծի պէս պիտի արտա-
յայտուէ՞ր, այնինչ պարագային իմ
խորհուրդներուս հաճութիւն պիտի
տա՞ր»: «Յիսուս ի՞նչ պիտի ընէր ե-
թէ իմ տեղս ըլլար»: Այսօրինակ
խորհուրդներ և հարցումներ մեզ կ'ա-
ռաջնորդեն Քրիստոսի անմասն կեան-
քին, ցոյց տալով մեզի Անոր աստուա-
ծային նկարագիրը: Իմ Տէրս կ'ազդէ
որ ես իրեն նման ըլլամ. իմ բոլոր
խորհուրդներս, զգացումներս, ձգդ-

տուճման իր վրայ կեդրոնանան, ապ-
րիմ ու գործեմ միայն իրեն համար,
իրեն նմանելով օրէ օր: Ո՛հ, երանի
թէ իրեն նման ըլլայի ընտանիքիս,
եկեղեցիիս, գործատեղեղիս մէջ, և ա-
մենուրեք: Եթէ նպատակս հոս երկրի
վրայ Քրիստոսի նման ըլլալ չըլլայ,
ուստի ի՞նչպէս կրնամ յուսալ երկինքի
մէջ իրեն պէս ըլլալու: Զէ՛ որ հոս
պատրաստուելու եմ, «Լոյսի մէջ բնա-
կող սուրբերուն վիճակին մասնակից
ըլլալու»:

4. Օրուայ ընթացքին պէտք է
Յիսուսի մասին ուրիշներու խօսիմ:
Յիսուս կը սիրէ իր անձին մասին
խորհիլս ու իրեն հետ խօսիլս, Ան
նաեւ կը սիրէ իրեն մասին ուրիշնե-
րուն խօսիլս: Ո՛հ, Քրիստոսի մասին
ո՞րքան կը խօսիմ մեղաւորներուն՝ ի-
րենց հոգիին փրկութեան համար, ո՞ր-
քան կը խօսիմ հոգեւոր կեանքի մէջ
պաղած հաւատացեալներուն զանոնք
աւելի խանդավառելու, քաջալերելու,
մխիթարելու ու երբեմն յանդիմանելու
երբ հարկ ըլլայ: Ո՛հ, եթէ պէտք է
խօսուի անձի մը մասին, այդ անձը
պէտք է ըլլայ Քրիստոսը: Աշխարհի
միակ ու բացարձակ պէտքը Անոր է:
Արդարեւ, երբեմն ի՞նչ պատուական
առիթներ կ'ստեղծուին ինծի Անոր մա-
սին խօսելու ու վկայելու, սակայն
ո՞րքան քիչ ատեններ կ'օգտագործեմ
զանոնք: Ո՛հ, պէտք է ես փնտռեմ
ու ստեղծեմ պատեհութիւններ խօսե-
լու շուրջիներուս միշտ, ամէն աեղ,
ատենին ու ատենէն դուրս Քրիստոսի
մասին: Պէտք է խօսիմ Անոր փառա-
ւոր անձին ու կատարեալ գործին մա-
սին, իր շնորհալի խօսքերուն ու զար-
մանալի հրաշքներուն մասին, իր սուրբ
կեանքէն ու քաւչարար մահուան մա-
սին, Անոր յաղթական յարութեան և

շնորհազարդ համարձման ու իր երկ-
րորդ գալստեան մասին:

Ո՛հ, երանի թէ շնորհքը ունենայի
խօսելու Քրիստոսի մասին Քրիստոսի
պէս:

5.— Այս օրուայ ընթացքին եթէ
կ'ուզեմ Յիսուսը պատուել, պէտք է
իրեն հետ քալեմ: Ան պէտք է իմ
ընկերս ըլլայ այս կեանքի ուղեւորու-
թեան ընթացքին, Ան պէտք է ըլլայ
իմ բարեկամս, մտերիմս: Պէտք չէ
երթամ այնպիսի վայրեր որ Անոր
օրհնեալ ոտքերը հոն չեն կոխեր, տեղ
մը ուր Յիսուս կը մերժէ հետս եր-
թալ: Պէտք չէ ընեմ բան մը որուն
հաւանութիւն չի տար Յիսուս: Քրիս-
տոսի հաճելի ըլլալու գաղափարը ա-
մէն բանէ վեր պէտք է նկատեմ:

Ո՛վ Ս. Հոգի Աստուած, լեցուր
Սիրտս քու շնորհքովդ, սորվեցուր
ինծի կեանքիս ու գործերուս գերա-
զոյն նպատակը ընել պատուել ու փա-
ռաբանել իմ սիրական Փրկիչս:

ՎԵՐ. ԹԷՆՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

Ամեն հաւատացեալ կրնայ ունենալ
կատարեալ խաղաղութիւն, բայց ժա-
քիչեւ ունին այդ օրհնութիւնը: Հաւ-
ցումը սա՛ է՝ ի՞նչպէս հասնելու է կա-
տարեալ խաղաղութեան, եւ անոնք որ
ունին ի՞նչպէս հասած են այդ վիճա-
կին: Պատասխանը ժա-
պարգ է: Ա-
նոնք կատարելապէս ապաւինած են
Աստուծոյ: Խաղաղութիւնը ուրիշ բան
չէ, այլ միայն հոգւոյն հանգիստը, զոր
կ'ունենան երբ անվերապահօրէն
յանձնուին Աստուծոյ ձեռքը:

(Բ.) ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՐԳԵԼՔՆԵՐ.

(Ամփոփուած Տօքթ. Զ. Պրատուցի «Աւետարանի փողի» մէկ խմբագրականէն):

Կը հաւատամ թէ, կ'ըսէ յօգուածագիրը, պզտիկ արթնութիւններ տեղի կ'ունենան, և միշտ ալ տեղի պիտի ունենան: Կ'ընդունիմ թէ մեծ ու հրաշալի արթնութիւններ ալ կրնայ տալ Աստուծոյ, սակայն կ'ուզեմ մատնանիշ ընել թէ վերջին 50 տարիներուն մեծածաւալ, համայնքային արթնութիւններ չեն եղած, և ներկայ փիլիսոփայական և ընկերային ըմբռնումներուն պատճառաւ այդպիսի արթնութիւններ ա'լ տեղի պիտի չունենան, և գլխաւորաբար հետեւեալ պատճառներով:

Նախ՝ արթնութեանց հանդէպ Պապականութեան բռնած պաղ և հակառակ դիրքը տկարացուցած է անոնց աճումը կամ զարգացումը:

Երկրորդ՝ հաւանաբար Տարվին՝ ամենէն զօրաւոր միակ անհատը եղած է որ արթնութեանց դարուն վերջ տուած է իր բարեշրջական վարկածով, որ ինքնին գիտական ըլլալէ աւելի փիլիսոփայական և որով ոչ փաստելի: Ան իր գրութիւններով արդի քաղաքակրթութեան ընթացքը տառապէս ետ դարձուցած է՝ փոխելով զայն բարոյական անիշխանութեան և քուսի դարուն: Տարվինի տեսութեան ռտեղծած և քաջալերած պայմանները կը ձգտին կործանել ամբողջ քաղաքակրթութիւնը, մշակոյթը և իվերջոյ նոյնինքն գիտութիւնը:

Երրորդ՝ իր գրութիւններով արթնութեանց վերջանալուն օգնող յաջորդանքը եղած է Ք. Մարքս: Իր գրութիւններէն ծնունդ առին արդի հակա-

քրիստոնեայ շարժումները որոնք կարգ մը տեղեր գրեթէ կը յաջողէին, բնաջինջ ընել Քրիստոնէութիւնը:

Չորրորդ՝ արթնութիւնը մեռցնելու գործին մէջ իր շատ կարեւոր բաժինը բերած է Ֆրոյտ անաստուած հոգեբանը որ աշխարհը ողորմած է արդի սեռային ազատութեան սեռութիւններով: Զիկմունտ Ֆրոյտ ոչ միայն արթնութեան դարը իր վախճանին հասցուցած է, այլ նաեւ հաղարաւոր ուսանողներու քրիստոնեայ հաւատքը կործանելով զանոնք ընկղմած է անասնական կոյր կիրքի մէջ:

Արթնութիւնը փճացնող ազդակները քաղաքակրթութեան յառաջացման չեն օգներ, բայց կը կործանեն Աւետարանական Քրիստոնէութիւնը. կը կործանեն ժուժկալութիւնը, մաքրութիւնը և սեռային ամօթխածութիւնը: Անոնք կը քանդեն օրէնքի՝ կարգապահութեան և ընկերային ազնիւ յարաբերութեանց հիմքերը:

Արթնութիւնը կը բարեոքէ կեանքը ու մարդկային յարաբերութիւնները, սակայն այն ոյժերը որոնք կ'ըսպաննեն արթնութիւնը, կը փճացնեն միաժամանակ մարդկային ընկերութեան բարոյական կարգ ու սարքը:

(Վեր.) Տ. ԽՆԴՐՈՒՆԻ


— Տաղանդը ուրիշ բան չէ, բայց եթէ տեսնել իրեւուն մեջ ինչ որ ուրիշներ չեն տեսներ:

— Ցաւը մարդկութեան լաւագոյն դաստիարակն է:

— Ձկայ հանճար մը որ փոքրիկ խեցեղութիւնը բաժնէ չըլլայ:

ԳԻՒԼԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ



ԵՆԵՐՈՒՆԻ ԳԱՃԱՃ ՅՈՎՍԷՓԸ

Մեր կալուածատիրոջ մօտ ծառայում էր և՛ մի կարճահասակ մարդ, որի պարտաւորութիւնն էր պահպանել նրա հաւանոցն ու մառանը: Կալուածատիրոջ բազմաթիւ հաւերը, սագերը, բադերը, հնդկահաւերը, ուրիշ զանազան թռչունները և նրա տան գործածութեան համար կաթի և կարագի պաշարանոցը յանձնաւ ինչ նրա հրակողութեանը: Այդ մարդը տաւառեան կովերին տանում էր արօտատեղին իսկ երեկոյեան կրկին ետ բերում: Նա կերակրում էր խոզերին, հոգ էր տանում ձիերի մի մասին և հարկաւոր գալիս նա էր մորթում թռչուններին խոհանոցի համար — մի խօսքով՝ նա էր կատարում զրանց նման ուրիշ թեթեւ գործեր: Կալուածատիրոջ կենդանիներն ու զիւղի տղաները համարում էին նրան իբրեւ մի շատ բարկացող և քիսախնդիր «գաճաճ մարդ»:

Նա յիսուն տարեկան մի մարդ էր, բայց տասը տարեկան տղաներից աւելի հասակ չուներ: Նա թէեւ այսպէս կարճահասակ էր, բայց շատ զօրաւոր ձայն ունէր: Երբ մի կով սկսում էր ցատկաւել և շարքից դուրս գալ, իսկոյն հեռուից լսւում էր նրա բարձր ձայնը: Նա փողոցային հայրօրեայներ էր թափում խեղճ կենդանիներու գլխին: Երբեմն էլ յանկարծ վրայ էր հասնում և նրանց սաստիկ ծեծում իր հաստ գաւազանով, որը միշտ նրա անբաժան ուղեկիցն էր: Ամենաուժեղ ձիերն անգամ, ինչպէս երեւում էր, ճանաչում էին այդ չարածէի փոքրիկ

էակին և վախենում նրանից: Երբ նա պոռում էր նրանց վրա, նրանք իսկոյն կանգնում և դողդողում էին: Մանաւանդ շատ վախենում էին նրա հաստ գաւազանից, որը նա գործ էր անում ամենաանխիղճ կերպով:

Մի օր գնացի այդ մարդին այցելելու, անցայ բակովը և յանկարծ հանդիպեցի նրան: Երեւում էր, որ նա շատ էր զայրացած: Հարցրի պատճառը, թէ նա ինչու է այդքան նեղացել:

— Ի՞նչպէս չը նեղանամ պատառխանեց նա, երբ մարդիկ ինձ միշտ նեղացնում են:

— Ի՞նչ է պատահել:

— Ահա թէ ինչ: Վերջերումս ամեն օր բադերից քանիսը մորթել եմ տանուէրիս սեղանի համար: Դեռ դա բաւական չէ՝ այսօր էլ մարդ են ուղարկել, որ երկուսը մորթեմ: Եթէ այդպէս շարունակեն մորթել տան բադերին, շուտով բոլորն ալ կը վերջանան, և յետոյ ես բոլորովին չէի դարմանալ, եթէ նրանք բոլորն էլ բադեր դառնային և սկսէին բադերի պէս ձայներ հանել: Այս խօսքերը տեսիլս: Նա շատ բարկացած ու գրգռւած էր:

— Յովսէփ, տեսա՞ք, ի՞նչպէս էին այդ բադերը փախում, որ ազատվեն ձեր ձեռքից, երբ դուք ետեւներիցը վազում էիք, հարցրի ես:

— Այո, կարծես զրանք հասկանում են, որ երբ ես նրանց ետեւից վազում եմ, նշանակում է որ անպատճառ պիտի մորթվեն: Եւ իսկապէս էլ այս կերպով բռնած բադերիցս ոչ մէկը ողջ ետ չի դարձել իր ընկերների մօտ: Նրանք գիտեն, որ նպատակս մորթել չը լինէր, չէի վազիլ նրանց ետեւից:

— Խեղճերը շատ են վախենում

ձեզանից, ասեցի ես, և իրաւունք ունեն վախենալու. որովհետեւ դուք ներանց եղբայրներից և քոյրերից շատերին էք արդէն կեանքից զրկել:

— Ծիշտ է, ճիշտ է, ես նրանց շատ շուտ մեռցնել գիտեմ, պատասխանեց նա: Մի անգամ որ ձեռքս ընկնում են, էլ պրծում չունեն. այո, մորթելու մէջ շատ վարժ եմ: Այս ասելիս՝ նա նայում էր ինձ մի առանձին ինքնաբաւականութեամբ:

— Յովսէփ, գիտէ՞ք, ինչ բանի վրա էի մտածում, երբ դուք վաղում էիք բաղերի ետեւից:

— Ո՛չ, ի՞նչ բանի վրա էիք մտածում, պարոն պատուոր:

— Ես կամայ ակամայ մտածում էի սատանայի վրա, որովհետեւ Աստուծոյ խօսքը նրա մասին ասում է, որ նա գոռոզ առիւծի պէս ման է գալիս իր զոհերի ետեւից ընկել և արդէն բռնել է ձեզ: Հիմա ահա այդ խեղճ բաղերը արիւնշաղախ կախված են պարիսպի վրայից. բայց իհարկէ ձեր մտքովն անգամ չի անցնում թէ պէտք է գլխով նրանց վրայ: Զէ՛ որ դուք ուշ անգամ չէիք դարձնում նրանց սարսափելի աղաղակների վրա:

Իհարկէ ոչ, պատասխանեց նա, ամեն անգամ մինչեւ իմ նրանց բռնելը՝ շունչս կտրվում է: Միթէ՞ էլ իսկի կը մտածեմ մէկ էլ նրանց ձեռքիցս բաց թողնել: Նրանց բռնում եմ թէ չէ՝ իսկոյն կապտում եմ ներանց ոտքերը, որ չը կարողանան շարժվել, և յետոյ անմիջապէս մորթում:

— Յովսէփ, սատանան էլ այդպէս է վարվում ձեզ հետ, ասեցի ես: Նա ձեր ետեւից վազել, ձեզ բռնել և ասել է. էլ հիմա բռնեցի Յովսէփին, կը

կապտեմ նրան հաստ թոկերով և ապա կը մեռցնեմ. Եւ այդպէս նա արդէն կապել է ձեզ մի թոկով, որ կոչվում է գինի. էլի մի երկրորդ թոկով, որ կոչվում է հայհոյութիւն. մի երրորդով, որ կոչվում է բարկութիւն և յետոյ կախել ձեզ պորսպից, որ չը լինի թէ դաք Յիսուսի մօտ, որովհետեւ նա գիտէ, որ Յիսուս միայն կարող է կտրատել կապերը և ձեզ ազատել: Յովսէփ, դուք հիմա կոխված էք պորսպից, և դա է պատճառը որ ոչ Կիրակի էք գալիս Աստուծոյ տունը և ոչ էլ շաքարթամէջ: Սատանան էլ կանգնած հսկում է, որ ձեր թոկերը չի թուլանան և դուք չարձակվէք: Գուցէ երկար չտեւի, մինչեւ նա իր դանակը կը խրէ ձեր սիրտը և ձեզ էլ այդ բաղերի օրը կը գցի: Յովսէփ, իմ ասելս այն է, որ դուք շատ շուտով կարող էք մեռնել, և քանի որ դուք միայն ապրել էք սատանայի համար, նա պիտի իրաւունքներ բռնեցնի ձեր վրա՝ ինչպէս իր սեփականութեան վրայ: Այդ բաղերը այստեղ են անցկացրել իրանց կեանքը. նրանք կերել են այն ինչ կալուածատիրոջ ծառաները չաղ են տւել նրանց տռաջը: Եւ հիմա էլ, պատկանում են իհարկէ նրան, որի սեփականութիւնն են և որի հսկողութեան և խնամքի տակ են եղել:

Ո՞նձ Յովսէփ: Ետեւրը նրան շատ յետնեալ և պակասամիտ էին համարում, բայց նա մեծ ուշադրութեամբ էր լսում և ինչպէս երեւում էր հասկանում էլ ինձ: Ես չարունակեցի. — Յովսէփ, եկէ՛ք Տէր Յիսուսի մօտ և խնդրեցէք, որ նա ձեզ մեղքի թոկերը կտրատի, որպէսզի դուք ազատվիք սատանայի իշխանութիւնից: Ես ձեռքս մեկնեցի նրան,

որ մնաս բարով ասեմ ու գնամ. բայց նա այնպէս էր նայում ինձ, որ կարծես մի նոր լոյս ծագած լինէր նրա համար. կամ մի նոր յայտնութիւն ըստացած լինէր:

Դրանից յետոյ էլ պատեհութիւններ ունեցայ երբեմն գիտել նրան: Աւետարանի լոյսը արդէն սկսեւ էր աւելի ծագել նրա հոգում մէջ. նա այնուհետեւ սկսեց լաւելի լաւ վարվել կենդանիներու հետ: Եւ բաղբւր մորթելիս՝ կամ նրանց դժվարութեամբ բռնելիս էլ՝ կարելի էր տեսնել, որ նա առաջուայ պէս այնպէս վայրենաբար չէր վարվում նրանց հետ: Վերջապէս ես համոզեցի նրան յաճախել ուսումնարանի սենսակում մեր շարաթի մէջ ունեցած ժողովներին. «Ժամանակ չունիմ», «չեմ կարող» և այլ այդ տեսակ առարկութիւնները յաջողվեց ինձ հերքել. նա կարող էր իր գործի հաջողատներով գալ այնտեղ, ինչպէս այդ անում էին միւս բանւորները: Սուրբ հոգին մի քանի շաբաթվայ ընթացքում վերջապէս կոտարեց իր փառաւոր գործը նրա մէջ. և մենք սիրով ընդունեցինք խեղճ, կոպիտ և մեղաւոր Յովսէփին մեր մէջ իբրեւ եղբայր Տէրումը: Երբ նա կիրակիները գալիս էր ժողովի՝ բոլորս էլ մի առանձին ուրախութիւն էինք զգում: Մինչեւ հիմա ոչ ոք Յովսէփին ուրիշ կերպ չէր տեսել, բացի իր ամենօրեայ գործի հաջողատով. բայց նա հիմա մի նոր հաջողատ էր գնել իր համար: Մենք ամենքս ուրախանում էինք, երբ նա էլ իր ուժեղ ձայնը խառնում էր ուրիշների ձայնին և փառաբանում Աստուծուն: Նա այնքան էլ երգելու չնոր՝ չունէր, բայց մենք այդ բանի վերաբերեալ մեր քննադատութիւնը ծաղում դնում էինք մեր

գրպանների մէջ, որովհետեւ գիտէինք, որ նրա սիրտը ուղիղ էր Աստուծոյ առջեւ: Շատ սիրում էիք լսել նրա երգեցողութիւնը եկեղեցիում, դաշտերում և ճանապարհների վրայ: Նա իր երգեցողութիւնը հիմա գերադասում էր առաջվայ հայհոյանքներից: Մենք օրնում ենք Աստուծոյն, որ նա փրկեց և այդ խեղճ մարդին: Այդ նոր յաղթութիւնը տվաւ մեզ գործելու մի նոր ուրախութիւն:

ԾԱՆՐ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Պատահում էր, որ կալուածատէրը երբեմն ինձ էլ էր հրուհիւրում իր հորուստ ճաշին կամ ընթրիքին: Այդ ազնուատում կալուածատէր մի սիրելի և քաղցրաբարոյ մարդ էր: Նրան ճանաչողներն ամենն էլ յարգում և լուրջ քրիստոնեայ էին համարում նրան: Ես սիրում էի հանդիպել նրան: Նա շատ հետաքրքրվում էր իմ գործով և առանձնապէս իր ուրախութիւնը յայտնում՝ ժողովրդի մէջ իմ արած հոգեւոր առաջդիմութեանը վրայ: Յաճախակի գնում էի նրա հետ զբօսնելու: Նրա պարզ, ողջամիտ և ընտիր դատողութիւնները միշտ աւելի էին մօտեցնում ինձ նրան: Ես զգում էի, որ այդ մարդը հասկանում է ինձ և ես սովորեալս վստահութեամբ հաղորդում էի նրան իմ գործի ամեն մանրամասնութիւնները:

Իր անգամ ճաշի հրաւէր ստացայ նրանից հետեւեալ հինգշաբթի օրվայ համար: Այդ օրը մի առանձին ընտանեկան հանդէս պիտի տօնվէր: Նրա ամեն որդիներն էլ պիտի հաւաքվէին հայրական տանը՝ Անգլիայի այլ և այլ մասերից, այնպէս որ կարելի էր նախատեսել, որ այդ օրը մի շատ հաճելի

օր պիտի լինէր: Վերջապէս հասաւ նշանակված օրը՝ և ես գնացի նրա տունը: Ուրախ և զուարթ նստեցինք լայն բացված սեղանի շուրջը: Ընդարձակ սեղանատունը զարդարված էր ճոխ և չքեղ կերպով: Սեղանը բոլորովին ծանրաբեռնված էր այլ և այլ համեղ կերակուրներով: Ինչ որ կարելի էր փողով ձեռք բերել, ինչ որ հնարագէտ խոհարարը կարող էր պատրաստել փռվել էին մեր առաջ: Այդ բոլորի վրա աւելացնենք և արծաթի անօթները, որոնք ճոխութեամբ պսպղում էին սեղանի վրա: Սպասոււորները զբաղված էին՝ այդ բազմազան կերակուրները հիւրերին առաջարկելով: Առաջարկվեց շատ համեղ հին գինի: Ամենքը լցրին իրանց բաժակները, միայն ես էի որ հրաժարվեցի: Կապալառուն աթոռիս ետեւից հարցրեց.

— Պարոն պատուիր, դուք ևս չէ՞ք կամենալ փոքր ինչ հին գինի:

— Ոչ, չնորհակալ եմ, պատասխանեցի ես:

— Բայց, սիրելի բարեկամ, խնդրեմ՝ դուք էլ մի փոքր այդ հին գինիից ընդունեցէ՛ք. դա լաւ է ձեզ համար, ասաց կողքիս նստած կալուածատէրը: Գինին շատ հին է. յիսուն տարի է, ինչ այդ գինին պահվում է ներքնատանը և միայն այսպիսի առանձին հանգամանքներումն է դուրս բերվում: Ուրիշ ժամանակ երբեք չենք գործածում այդպէս հին և լաւ գինի: Խնդրեմ, մի փոքր համ առէ՛ք դրանից. միայն կէս բաժակ՝ մեզ հետ ընկերութիւն անելու համար:

— Ո՛չ, չնորհակալ եմ: Ես երբեք գինի չեմ խմում:

Իմ միւս կողմը նստած է տան կրտսեր աղջիկը, 23 տարեկան մի

շատ սիրուն օրիորդ: — Խնդրեմ, մի փոքր վեր առէ՛ք, ասաց նա, թէկուզ միայն ցոյց տալու համար, որ դուք չէ՛ք խորշում հասարակութիւնից:

— Ոչ, չնորհակալ եմ:

Որդիներից իւրաքանչիւրը և մայրն էլ ստիպում և ամեն կերպ աշխատում էին համոզել ինձ, որ ընդունեմ կամ գոնէ համը տեսնեմ, որպէսզի, ինչպէս իրանք էին ասում, կարողանամ մի գաղափար կազմել այդ արտասովոր և թանկագին խմիչքի մասին:

— Ոչ, չնորհակալ եմ. եթէ իրաւունք տաք, խնդրեմ՝ մի բաժակ լի մօնաղ, ասեցի ես: Կապալառուն տըվաւ ինձ խնդրածս, և ես իմ այդ նեղ դրութիւնից ազատվեցի:

— Իրաւի դուք զարմանալի մարդ էք, ասաց որդիներից մէկը, որը բրիտանական զօրքի գնդապետ էր, ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է այսպիսի պատուական հին գինուց հրաժարվել: Մեր կեանքում միայն մի անգամ ենք ահա տեսնում, որ այդ գինին, այն էլ մի շիշ միայն, ներքնատան ծածուկ խորշերից լոյս աշխարհ ընկնի: Ինչո՞ւ էք դուք այդպէս սուստիկ դիմադրում և չէ՛ք ճանկում այդ փառաւոր ըմպելիքից: Իրաւ որ ես չէի կամենալ ձեր տեսակի քրիստոնեաներից լինել, որոնք նոյնիսկ հրաժարվում են խմել մի բաժակ հին գինի: Դա ճշիարիտ որ՝ մի ողորմելի կացութիւն կը լինէր: Ես երեւակայել անգամ չեմ կարող, որ մարդ այդ աստիճանի նեղ գաղափարներով բռնուած՝ միանգամից մեկուսանայ ուրիշներից:

Իսկապէս այդ իրիկվայ ժամերը այնքան էլ հաճելի չէին ինձ համար: Երեւում էր, որ մի մեծ վայել էր աս-

մենի համար այդ գեղեցիկ հին գինին և քանի որ դա սեղանի վրա էր, միևնույն ժամանակ նայող անգամ չկար:

Յառում էի, որ ամենքը ինձ չափից դուրս նեղսիրտ էին համարում, բայց ես մի անգամ որոշել էի բոլորովին հրաժարվել խմիչքներից. դրա համար չէի կարող քանդել այդ որոշումս: Եւ այդպէս այդ օրը գոնէ խիղճըս հանգիստ մնաց:

Հետեւեալ առաւօտ, հանդիպեցի կալուածատիրոջ: Սովորական բաների վրայով քիչ խօսելուց յետոյ, նա ասաց. — Ես շատ ուրախ եմ, որ դուք երէկ երեկոյեան հրաժարվեցիք:

— Իսկ ես ճշմարտապէս շատ աւելի ուրախ եմ այդ խօսքը ձեզնից լսելու համար, պատասխանեցի ես դարմացած, որովհետեւ կարծում էի որ դուք էլ նեղացած կը լինիք ինձանից ձեր խնդիրքը չը կատարելու համար:

— Ոչ, պատասխանեց նա, ես ընդհակառակը ցաւում եմ, որ ձեզայնքան ստիպեցի. որովհետեւ ես տեղեակ եմ ձեր գաղափարին և գիտեմ որ դուք հաստատամիտ մարդ էք: Եւ գիտէ՞ք ես արդէն աղօթել էի ձեզ համար որ դուք այդ փորձութեանը դիմադրել կարողանաք: Ծճմարիտն ասեմ, Լօնդոնից նոր եկած որդիներս պնդում էին, թէ նրանք հեշտութեամբ պիտի համոզէին ձեզ փոքր ինչ գինի խմել, մոնաւանդ մեր ամենալաւ հին գինին: Դուք գիտէք, որ ես ինքս էլ խմողը չեմ և շատ կը փափաքէի, որ որդիներս էլ չը խմեն: Բայց քանի որ նրանք միշտ սովորութիւն ունին ճաշին խմելու, ես էլ չէի կարող այդ խնջոյքին գինի չը բերել տալ: Ես առաջուց ասել է նրանց ձեր մասին, որ դուք գինի բոլորովին չէք խմում:

Սակայն նրանք մինչեւ վերջին ծայր աշխատեցին փորձել ձեզ, բայց առանց յաջողելու: Ահա թէ ինչոր ես սըրտանց շնորհակալ եմ Աստուծոյ, որ դուք հաստատ մնացիք: Հիմա նրանք կը հաւատան ձեր խօսքերին և երէկվայ փորձից յետոյ ձեր ազդեցութիւնը աւելի կը լինի նրանց վրա: Միայն թէ երէկ շատ էի ցաւում ձեզ համար: Բայց հիմա գոհանում եմ Աստուծանից, որ նա ձեզ շնորհք տվաւ դիմանալ:

Ինչպէ՞ս շնորհակալ եղայ Աստուծանից, որ նա ինձ պահեց փորձութեան ժամին: Այն միտքը՝ թէ գուցէ ես զիջէի, հիմա զող էր պատճառում ինձ: Ես ուրախ էի և սպասաւորների պատճառով: Հաւանական է որ նրանք էլ գիտէին գաղափարի: Նրանց պարտքն էր գինին առաջարկել ինձ. բայց երբ տեսան, որ ես նրանց ամեն մի փորձին դիմադրեցի, նրանք էլ աւելի զօրացան: Օրհնում և գովում էր Աստուծուն մանաւանդ մեր կապալառու եղբայրը: Փոքր լինի միայն նրան, որ ինձ շնորհք տվաւ նոյնիսկ կէս բաժակ գինուց հրոժարվելու, որովհետեւ այդ մի փոքր գինին էլ բաւական կը լինէր իմ ամբողջ գործին վընասելու և իմ Տիրոջն անպատելու: Այդպիսի մի փոքր գիւղում ամենքը միմեանց ճանաչում են: Գիւղամիջում պատահած ամեն մի դէպքի մասին համարեա ամեն տեղ խօսվում է: Ուրեմն զարմանալի չէր, որ կալուածատիրոջ տան պատահած անցքը շուտով գիւղի մէջ խօսակցութեան առարկայ դարձաւ: Այդ չնչին դէպքով ես աւելի լաւ արդիւնք ձեռք բերի: Մարդիկ տեսան որ ուրիշներին ինչ որ սորվեցնում էի, նոյնը կատարում իմ կեանքի մէջ:

«Բարի Լուր» հե

ՆՈՒԻՐՄԱՆ ԿԵԱՆՔ

(Աճձնակաճ վկայութիւն)



Մեր Տէր Յիսուս Քրիստոսի պարգեւած ձրի փրկութիւնը հաւատքով երբ ընդունեցի՝ մեղաց թողութեան գիտակցութիւնն ու Աստուծոյ խօսքին վկայութիւնը թէ Աստուծոյ որդի ըլլալու իշխանութիւնը ընդունած եմ՝ սիրտս անպատմելի ուրախութեամբ ու հրճուանքով կը լեցնէին։ Ուարդարեւ՝ վերստին ծնունդ ունենալէս ի վեր երկնաւոր Հօրս հետ սերտ հաղորդակցութեան քաղցրիկ կեանք մըն ալ վայելել սկսած էի։ Վաղեմի թշնամիիս, Սատանային, մէն մի յարձակումին՝ Աստուծոյ խօսքովն ու աղօթքով կը յաղթէի։ Գարնան արեւին կենդանարար ճաճանչները ըմբոշխնող բոյսերու հանգոյն՝ հոգեվառ ճշմարտութիւններ կ'ըմբոշխնէի ո՛ւր որ՞ջանոնք գտնէի։

Սակայն՝ քանի հոգեւոր կեանքի մէջ կը յառաջանայի՝ Աստուծոյ սեղանին վրայ դրուելիք Նորանոր բաներ կեանքիս մէջ երեւան կուգային։

Հոգիիս մէջ սա գիտակցութիւնը արթննալ սկսած էր թէ Աստուծոյ զիս կատարեալ սիրով մը կը սիրէր և ուստի Աստուած սիրող սիրտը իրաւունք ունէր նոյնաման սէր փնտռելու իր գաւկին մէջ։ Իրեն հանդէպ Այսինքն թէ Աստուած զիս անվերապան նուիրման կեանքին կը հրաւիրէր։

«Կատարեալ նուիրում», ահա՛ այս էր Աստուծոյ պահանջը։ Առկէ պակաս բան մը Աստուծոյ սրտին պիտի չկըրնար գոհացում տալ։

Արդէն նուիրուած էի Յիսուսի այսուհանդերձ ատիկա այլեւս չէր

կրնար գոհացում տալ՝ նոյն իսկ իմ սրտին։

Ինչպէս վերը յիշեցի, կեանքիս մէջ նորանոր բաներ երեւան կուգային, որոնք եւս Աստուծոյ սեղանին վրայ դրուելու էին։ Ամէն բան, ամէն բան, կեանքը իր բովանդակ էութեամբը Աստուծոյ նուիրուելու էր։ Ներկաս ու բոլոր ապագաս, իր բոլոր յոյսերովն ու յոյժերովը Աստուծոյ պատկանելու էին։

Ահա՛ հո՞գ է որ մեծ դժուարութիւններ երեւան կուգային։ Յօժար էի իմ ուխտը նորոգելու (Աւետարանի մշակ մը ըլլալու ուխտը) և կեանքը Աստուծոյ նուիրուած պահելու, բայց կային բաներ որոնք կեանքէն աւելի թանկարժէք կը թուէին ըլլալ ինծի, ուստի զանոնք եւս սեղանին վրայ դնել անհնարին կը գտնէի։ Եւ ուստի, ներքին հզօր մեծամարտութիւն մը ծայր տուած էր հոգւոյս մէջ։ Թէ Աստուած և թէ ալ Սատանան զիս բոլորովին ունենալ կ'ուզէին։ Վերջին որոշումը տալն ալ ինծի վիճակուած էր։

Անցեալի իմ ունեցած հոգեւոր փորձառութիւնը ոչինչէն ալ պակաս երեւնալ սկսած էր իմ աչքերուն։ Տէրը ինծի կը հասկցնէր թէ ես իմ բովանդակ էութեամբս իրեն ըլլալու էի։ Իմ ներկաս եւ ապագայովս, իմ բոլոր յոյս եւ փափաքովս իր ձեռքերուն, իր կամքին յանձնուելու էի։ և ոչ մէկ բան, ինչ որ ալ ըլլար ան, ինծի համար վերապահելու չէի։ Թէ Տէրը ինքը ինծի համար գոհուած էր, իր բոլոր էութեամբը ինծի տրուած էր, և ուստի ես ալ յօժար պիտի չըլլայի իմ բովանդակ սիրտը, կամքը եւ կեանքը Անոր նուիրելու։ Կատարեալ սէրը ասկէ պակասով մը գոհացնել

անկարելի կը տեսնէի:

Վայրկեանին լրջութիւնը իսկապէս կ'զգայի: Ինծի այդպէս կը թուէր թէ մահու կենաց խնդիր էր սա: Տէրոջ առաջարկին «ոչ» ըսելու ըլլալի, վստահ գիտէի թէ իմ չափ սիրած Փրկչիս հետ այլեւս ոչ մէկ բաժին պիտի կրնայի ունենալ: Գիտակից էի թէ Տէրը իրեն կատարեալ սրտով նուիրւած խաւականներ կը փնտռէր: Տէրոջ հրաւերին եթէ «այո» ըսէի, ու ատոր իբր արդիւնք տարիններէ ի վեր՝ եւ նոյնիսկ ազօթքով՝ կառուցած գղեակները եթէ հիմնայատուկ կործանէին ինչ պիտի ըլլար խեղճիս վիճակը...

Հոգւոյս խորքին մէջ ներքին պատերազմ մըն էր որ կը մղուէր: Բայց, վերջապէս, Տէրոջ սէրը յաղթութիւնը տարաւ: Ուստի, ծուկի գալով՝ կոտրած հոգիով ու արցունքոտ աչքերով առ Աստուած ազօթք մը մատուցի սրտիս խորքէն — «ով Տէր, հոգիս յօժար է, բայց մարմինս տկար: Քուկդ եմ՝ քու շնորհքովդ, և քուկդ պիտի մնան քանի կեանք տոտ ինծի»:


Աստուծոյ սեղանին վրայ կր տեսնէի ինքզինքս: այո, ամէն բան հոգ էր գրուած: Ու ես Աստուծոյ օծութեան կ'սպասէի զոր չուշացու ու հետը բերուէ Աստուծոյ անմիջական ներկայութեան վստահ մէկ գիտակցութիւնը: Ոչ, թեւ թիսուս էր կեանքիս կեդրոնը գրաւողը: Երբ ոտքի ելայ, Անոր ներկայութեան քաղցրիկ գիտակցութիւնը անպատմելի ու փառաւոր ուրախութեան կոհակներով կը պատէր սիրտս: Նոր գտած էի իրական կեանքը որուն համար սրտանց փառք կուտայի Աստուծոյ:

Աստուած իմ մէջս ու ինձմով գործել կ'ուզէր, բայց առաջ պէտք էր

որ ես իբրտէ յօժար ըլլայի իր գործեակներպին, ու երբ զիս յօժարեցուց, փոթորիկները չուշացան: Տարիներէ ի վեր իմ կառուցանելու վրայ եղած օգնչին զղեակները և ապագայի յաջողութեանց ձրագիրները հիմնայատուկ կործանեցան: Ու աւելի ես ըլլալով՝ Տէրը թոյլ տուաւ որ մէկէ աւելի անգամներ մահու հիւանդութիւններով երկայն ամիսներ մահիճի ծառայեմ չափ ցաւերով՝ մահու կենաց միջեւ տարուբերուելով: Տէրը իր դպրոցին մէջ իր գործին համար զիս կը պատրասէր, և այն տեսն Ս. Հոգին կը վկայէր թէ ամէն բանը բարիի գործակից էին զԱստուծոյ սիրողներուն համար: Ու այդպէս ալ եղաւ իսկապէս, բառին բովանդակ առումովը: Փառք իւր Անուան:

Ու երբ յարմար օրը հասաւ, Տէրը զիս զրկեց այդպիսի վայրեր ուր կը գտնուէին, սիրոյ, կարեկցութեան, մխիթարութեան, խրախուսանքի կարօտ հոգիներ, եւ ուստի պատահութիւններ ունեցայ հիւզաւաններու, թոքախտանոցներու ու նամանաւանդ Ղազբրի աջգուրկներու եւ հաշմանդամներու: պատասպարանին մէջ երկայն տարիներ գործելու: Ու հիմա ալ Տէրը պատահութիւն կուտայ Հոյ Աւետ. Եկեղեցիներու մէջ գործելու: Այսուհանդերձ կ'ամշնամ իմ անցեալի կեանքէս: Քանզի չեմ կրցած ըլլալ այնպիսի աշխատաւոր մը զոր Տէրը կ'ակընկալէր ինձմէ որ ըլլայի իր ջանքը իմ վրայ չափ է եղած, բայց, աւաղ, արդիւնքը ջնջին: Ոչ, սուհանդերձ չեմ վնասիր, հապա իմ ուխտերս Տէրոջ առջեւ կը նորոգեմ աւելի եւս իրեն նուիրուած զաւակ մը ըլլալու համար իր Աւետարանին ծառայութեանը մէջ: Ինծի համար ազօթողէք:

ՏԵՐՈՋՄՈՎ ՆՆՁԱԾ



Ահա ճիշդ տարի մըն է որ մահաւոր մեզմէ զոտուած է ամենուս կողմէ սիրուած ու յարգուած՝ Գրիգորի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ նախկին սարկաւագոսէին՝ Օր. Վիքթորիա Լեւոնեան, 20 Յուլիս 1947ին շատ կարճատեւ ու տաժանելի հիւանդութենէ մը վերջ ի Տեր ննջեց:



Օր. Վիքթորիա Լեւոնեան ծնած

Տէրը Իրեն կոտարեալ սրտով նուիրուած զաւակներ կը փնտռէ որպէսզի զանոնք կտրենայ Իր Ս. Հոգի ուր լեցնել ու աշխարհ զրկել, որպէսզի կեանքի փոթորկալից ովկեանին վրայ տարուեր բոլոր շնորհներն փրկութեան նուակը մատնանշող երկնաւոր փարոսներ ըլլան տառնք թանձր խաւարին ընդմէջէն: Դուն աւանցմէ մէկը ըլլալ չե՞ս ուզեր:

Ազգն ու Աստուած այսօր քեզի կը կարօտին: Մեր եկեղեցիներուն կողքը՝ նուիրուած երիտասարդ, երիտասարդուհիներու է, սիրելի ընթերցող դուն ատենցմէ մէկը կրնաս ըլլալ:

է Այնթապ 1885 թուականին: Հաւատացեալ ծնողքէ մը՝ Տիար Մովսէս և Տիկին Դիտոյն Լեւոնեանի զաւակն էր ան: Իր նախնական կրթութիւնը ստանալէ յետոյ անգլոյն Հայ Աւետարանական դպրոցին մէջ, ուսանած է երկու տարի ալ Այնթապի Ամերիկեան Աղջկանց վարժարանը: Իր հօրը մահը վրայ հասնելով և կարգ մը դժուարին պարագաներու քերմամբ կը ձգէ վարժարանը ու կ'ստիպուի գործի տապարէզի հետեւիլ իր այրիացեալ մօրը և իր կէպտիկ քրոջ ու եղբայրներուն ապրուստը մասամբ մը հոգալու համար: Օր. Վիքթորիա Լեւոնեան Ան կէտք զանազան տեղեր որպէս տնօրինուհի մանկապարտէզի կամ ձեռագործի դպրոցին մէջ տեսչուհիի պաշտօններ վարած է:

1916—1917ին ալ Ատանայի մէջ թուրք կառավարութեան կողմէ հիմնուած մայրերու դպրոցին մէջ կը վարէր տնօրէնութեան պաշտօն, որուն համար կառավարութենէն կը գնահատուի: 1922 թուականին կը հաստատուի Գրիգորէ, ուր երկու տարի ալ ուսուցչութեան պաշտօնով կ'գլխավորէ:

Դիտոս է թէ մեր ազգին եւ թէ ալ համայն մարդկութեան միակ յոյսը: Անոր Աւետարանը՝ փրկութեան, աւետարանն է, և Անոր թագաւորութիւնը՝ արդարութեան, սիրոյ եղբայրութեան, խաղաղութեան, համերայնութեան, և ճշմարիտ ու տեւական ուրախութեան թագաւորութիւնը:

Ուստի, նուիրէ քու կեանքը Տէր Յիսուսի Դիտոսի ծառայութեան, Անոր թագաւորութեան երկրի վրայ տարածման սատարող ազգակ մը եղիլ: Կ'արժէ որ այդպէս ընես:

Թրիֆօլի ՎԱՀՐՍՄ Հ. ՍԱԼԻՊԵԱՆ

Թաշճեան վարժարանին մէջ:

Օր: Վիգթօրիա Լեւոնեան Գաւի-
րէ հաստատուելէն ի վեր միացած էր
տեղւոյն Հայ Առետարանական Եկեղե-
ցիին ուր մինչեւ իր մահը ցոյց կու-
տար արդիւնաբեր գործունէութիւն
մը: Ան երկար տարիներ սոյն Եկեղե-
ցիին մէջ վարած է կիրականօրեայ զըպ-
րոցի տեսչութիւնի պաշտօնը, նսեւ աշ-
խատած է Տիկնանց Միութեան մէջ
երբեմն որպէս Ատենապետութիւնի եւ
երբեմն ալ որպէս ատենադպրութիւնի
պաշտօնով: Օր: Վ. Լեւոնեանի ապրած
հոգեւոր կեանքը լաւ տպաւորութիւն
ձգած է իր շուրջիներուն վրայ: Իր
միակ հաճոյքն էր իր միակ Փրկիչին
ծառայել, ու այսպէս ալ ըրաւ մինչեւ
իր կեանքին վերջը:

Օր: Վիգթօրիա Լեւոնեան՝ վերջս-
տին ծննդեան փորձառութիւնը գործ-
նական կերպով իր կեանքին մէջ գիտ-
ցող քրիստոնեայ մըն էր: Ան իր այ-
ցելութիւններուն ընթացքին պատ-
րաստ էր վկայելու Տէրովը կատարած
մեծ գործերը իր կեանքին մէջ: Իրեն
ուրախութիւն կը պատճառէր երբ
գտնելու ըլլար ոեւէ տախտի մը օգնե-
լու եւ ծառայելու ուրիշներուն: Իր
մահողանքն տարի մ'առաջ ընտրուե-
ցաւ սարկուսագութիւնի պաշտօն վարելու
եկեղեցիին մէջ, եւ արդարեւ որքա՞ն
խանդով կատարեց զայն իր սրտին
վրայ կրելով Եկեղեցիին զանազան
հոգերն ու զժողովութիւնները: Օր:
Վ. Լեւոնեան նաեւ շատ նախանձա-
խնդիր էր ուղղափառ հաւատքի հա-
մար: Զինք մօտէն ճանչցողները տ-
առ լաւ տեղեակ են: Ուրիշներու
հետ իր տեսակցութեանց ընթաց-
քին անվարան ու խիզախօրէն կը խօ-
սէր ու կը հնչեցնէր Աւետարանին
ճշմարտութիւնները: Ան զօրաւոր էր

հաւատքով: Ուէ փորձութիւն, ցաւ,
վիշտ եւ կամ նեղութիւն կարող չէին
տկարացնելու եւ ընկճելու զինք:

Զինք՝ վերջին այցելութեանս ըն-
թացքին տեսայ թէ ֆիզիքական ցաւ-
ւերով շատ կը տառապի, սակայն ան-
տըրտունջ եւ անմռունջ, եւ անոր դէմ-
քին վրայ կը նշմարէի այդ անպատ-
մելի խաղաղութիւնը, որ Քրիստոս
կուտայ միայն անոնց որոնք ճշմար-
տապէս կը հաւատան Իրեն: Ան երբեք
չէր վախճար, այլ ինքզինքը աւելի
երջանիկ կը զգար որ շատ չանցած
այս տառապանաց աշխարհէն զատուե-
լով պիտի միանար իր ցանկալի Փրկ-
չին ու իրմէ տալ գացած իր սիրե-
լիներուն: Զգած ըլլալով իր ետին
տիպար օրինակ մը քրիստոնէական
կեանքի ու գործունէութեան, Օր: Վ.
Լեւոնեան փակեց իր աչքերը այս սին
ու ունան երկրին վրայ բանալու հա-
մար Քրիստոսի փառաւոր ներկայու-
թեանը մէջ:

«Ու Երկիցեմն ձայն մը լսեցի՝ որ
կ'ըսէր. Գրե, այսուհետեւ երանելի եմ
այն մեռելները՝ որոնք Տեղովով կը
ննջեն»: Յայտ. ԺԴ. 13.

Վեր. ԹէՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԶԷԻ ԳԻՏԵՐ, ՏԷՐ ԻՄ

(Աղօթք)

Զէի գիտեր ո՛վ Աստուածս ու Տէրս թէ խորունկ Բրիստոնէական կեանքի մը խնդիրքս, այսքան առաջի պիտի նստէր իմ վրաս, թէ պիտի անցնէիր զիս խորո՛ւնկ վշտերէ, փորձութիւններէ, նեղութիւններէ խոնարհեցնելու համար: Զէի գիտեր հոգւոյս խորքին մէջ ունեցած քերուքիւններս, չար բնաւորութիւնս, միջեւ որ փորձութիւնները տակնուվրայ ընելով էութիւնս, ալեկոծութեան մատնեց հոգիս: Դառնութեան մաղձը գաայ հոն, իմ մէջս: Չարը յարձակեցաւ իմ ամենանուրբ ու ամենազգայուն կողմէս և շփոթումի մատնեց զիս Ո՛վ ամենազէտ ու արդարադատ Աստուածս, Դո՛ւն այս ամէնուն ի՞նչ պէտ թոյլատրեցիր: Երկնաւոր Հայրս, Բու անսահման սէրդ չեմ կրնար ըմբռնել: Միտքս կը լեցնէ շատ մը ինչո՞ւներու տարափը... չեմ ուզեր «ինչո՞ւն»ներուն ներքեւ ընկճիլ: Հակառակորդը զիս ընկճումի ճանապարհէն, միջեւ յուսահատութեամբ ահաւոր գուփին եզրը տարաւ...

Յուսահատութեան Գուփը նեխած էր մարդոց դիակներով: Սարսափեցայ... անաւո՛ր վիճակ... Սակայն Դո՛ւ, ո՛վ բարեգութ ու Ամենահզօր Տէրս ու Փրկիչս, ճիշդ ատենին օգնութեան փութացիր: Այո՛, Բու Ամենակարող, սիրոյ բազուկդ երկարեցիր զիս բռնելու: Զի թողուցիր որ կորսւնք իմ յաւէտ:

Զէի գիտեր խորապէս տազնապիլ ի՞նչ կը նշանակէ, միջեւ որ անոր սուր կծուժը զգացի հոգւոյս խորքին մէջ: Երբեք չէի գիտեր թէ հոգեկան առաքինութիւնները աճելու համար

կարօտ են անպայման վշտի, արցունքի առատ հեղեղներուն: Զէի գիտեր թէ զանոնք աճեցնելու համար իմ մարդկեղէն, հոգեղէն զանգուածիս մէջ պիտի պատրաստես գետինը:

Ո՛վ Անիմանալի լուսոյ մէջ բնակող եւ անըմբռնելի խորհուրդներու տկը եղող Աստուածս, ես քեզմէ կը խնդրէի հոգեւոր օրհնութիւններ, որպէսզի Դու զանոնք երկինքէն վրաս թափես որպէս անձրեւ:

Ո՛հ, չէի գիտեր թէ զանոնք իմ իսկ զղջմամբ, վշտի, արտօսիի հոգեգերանական տազնապիլ խառնուրդէն պիտի բեղմնաւորես: Մինչ ես վերէն կ'ակնկալէի Դո՛ւ կամեցար զիս մարտնչութեան, ճնշութեան մատնելով քաղցուն հանել: Զէի գիտէր թէ երբեք իմ մէջս լաւ բան մը գոյութիւն ունենայ, սակայն Դու զարմանալի հըրաշագործութեամբ, անպիտան ատաղձէն նոր չէնք մը կառուցանելու պաշտօնը յանձն առիր: Ո՛ր աշխարհահռչակ ճարտարապետ՝ պիտի համարձակէր ասանկ անհնարին գործ մը կապտարել: Բու ամենակարող զօրութեանդ առջեւ «անկարելի» գոյութիւն չունի երբեք: Հաճեցար վշտի հետքին մէջ հոյեցնել ու երկա՛ր սպասել անոր զտմանը: Մե՛ծ, շատ զարմանալի համբարութեամբ կը տանիս ցաւին, տառապանքին, փորձութեան ծանրութիւնը ի՛մ հետս: Բու իսկ հզօր բազուկդ իմ անկար էութեանս ներքեւ գնելով, փորձութեան դիմադրելու, պայծառելու և դիմաւորելու կարողութիւն կուտաս: Օրհնեալ ըլլայ Բու Սուրբ ու բարձրեալ անունդ:

Դու ես Յոյս անյուսին, նեցուկ անկեալին, ազէտին իմաստութիւն, տկարին զօրութիւն ու մեղաւորին տրգարութիւն: Ո՛վ Շնորհաց Աստուած, որ

ՀԵՐՈՍԱՏԻՊ ՄԱՅՐ ՄԸ



Յուլ. 17ին ի Տէր ննջեց Տիկ. Սէյիտէ նորաստեղծեան, յետ երկարատեւ հիւանդութեան, խոր ծերութեան մէջ, Թաղումը կատարուեցաւ Եկեղեցւոյն հովուին ձեռամբ՝ չրջապատուած մեռնողին սիրելիներէն: Մահը եղաւ ազատում մը իրեն համար, որովհետեւ երկար տարիներու բեռնն տակ արարդէն կքած հանդիսատես կ'ըլլար իր իսկ մարմնոյն աւերածութեան եւ փրկուզման:

Տիկ. Սէյիտէ ծնած էր Այթմապ 90 տարիներ առաջ և կը պատկանէր Հայ Աւետ. համայնքին: Դեռ շատ երիտասարդ կը կորսնցնէ իր ամուսինը, զոհ մը թրքական եսթաղանի, և կ'ըլլայ որբեւայրի չորս և անչափահաս զաւակներով՝ նւթական բարիքներէ զուրկ: Անհնարինս զժուարին կացութեան կը մատնուի, մանաւանդ շատ չանցած երբ հինգերորդ զաւակ մը լոյս աշխարհ կուգայ: Սակայն Տիկ. Սէյիտէ չի յուսահատիր, գիտէր որ որբերուն և որբեւարիներուն հօր պաշտպանը Տէրն է, կը վստահի Անոր և անխախտ խոստումներուն անվերապահօրէն: Միեւնոյն ատեն ալ ան-

Ամէնակար Տէրս, բոլոր «չէի գիտեր»-ներուս սին ու թեթեւ տրցակով կուգամ Բեզի, Դու անչափելի սիրովդ ու ողորմութեամբդ կ'ընդունիս զիս, թերութիւններս լրացնելու ու զիս դաստիարակելու համար: Անորժանարար Բուկդ եմ... փա՛ռք կուտամ... փա՛ռք Բեզ, Արժանի ես փառաբանութեան յաւէտ:

ԲԻԻԶԱՆԴՈՒՀԻ Գ. ԵՍՐՏԸՄԵԱՆ

Սալթ

գործ ալ չի կենար: Դաս տալ յանձն կառնէ տուներու մէջ. կարգաւ գրել փափաքող կիներուն: Միւս կողմէ այն ատենները հազիւ 10 տարեկան տղան Եռասուֆը կը ղրկէ գործելու: Այս կերպով գրեթէ մասնակ Եռասուֆ փոխանակ դպրոց յաճախելու. գործի կը լծուի և տան բեռը կը բաժնէ իր մօրը հետ:

Երեւակայեցէք մայր մը որ թէ մօր և թէ հօր պարտականութիւնները կը իրտարէ իր քղանցքին փակած քոնի մը փոքրիկներով: Յաճախ ամենապզտիկը կը ձգէր ազգակոներուն խնամքին՝ հասնելու դասերուն և ճարելու տան հոցը: Միեւնոյն ատեն պէտք էր համէր անոնց կերակուրներուն, հագուստ կապուստին. և ասիկա տարիներ, կեսնքը եղած էր իրեն համար տաժանելի, յաճախ հովը դէմ էր իրեն, աւոր համար նուարկութիւնը եղած էր դանդաղ և դժուարին: Ահա թէ ինչու հերոսատիպ մայր մը կոչեցինք զինքը: Հերոսներ միշտ պատերազմի դաշտերուն մէջ չեն գտնուիր, տուներու անկիւններու մէջ անձանօթ մնացած շատ հերոս և հերոսուհիներ կան, որոնց անուններուն թերթերուն մէջ չեն հանդիպիր, բերաններուն մէջ անոնք չեն փառաբանուիր:

Տիկին Սէյիտէ ժամանակ մըն ալ որպէս Պալայրլ Ուումըն կ'աշխատի ընտանիքներու մէջ, հոգեւոր գործիչի գործը կ'ընէ, օգտակար կ'ըլլայ շատերուն հոգեւոր իմաստով: Հայերէն չէր հասկնար, սակայն հայերէն Սր. Գիրքէն ռեւէ կտոր մը հնչտօրէն կը վերածէր թրքերէնի, կարելի է ըսել որ տիկին Սէյիտէ իր Սր. Գիրքը գոց գիտէր:

Ընտանիքին հոգեւոր դաստիարակութեան ալ հոգածու եղած է իր բաղ-

ՀԱՍՏԻՆՆԵՐ

ԵՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

է.

Սեպտ. 16-ին պաղեստինեան կլի-
մային յատուկ զեղեցիկ մէկ առաւո-
տուն, կ'առնենք օթօպիւս մը ու կ'ուղ-
ղուինք դէպի Գալիլեա, գործունէութեան
դաշտը մեր Տիրոջ որ լիքն է
անմոռանալի յիշատակներով: Սակայն
մեր ճամբուն վրայ իւրաքանչիւր թիզ
հող իւրայատուկ պատմութիւնը ունի,

մաղբաղ վիճակին մէջ: Իր զաւակ-
ներէն երկու աղջիկներ Միաց. Նա-
հանգները կը գտնուին, երկու մանչ և
աղջիկ զաւակ մը եւս հոս Աղեքսան-
դրիա կը գտնուին, ամէնքն ալ երջա-
նիկ ընտանիքներ կազմած են: Տիկին
Սէյեիտէ բաղդաւոր էր որովհետեւ
բոլոր զաւակներն ալ ապաշխարած են,
յետոյ եղած էր երջանիկ մեծ մայր մը
բազում թոռներու:

Հորկ չկայ ըսելու որ Սէյեիտէ
Նորատունկեան ոչ թէ խիստ փոխ-
պայմաններու տակ հաւատքը պահեց,
այլ մեծցուց իր զաւակներն ալ մի-
եւնոյն հաւատքին մէջ: Իր եկեղեցին
կը սիրէր, կը սիրէր նաեւ Տիրոջ հա-
մար գործել, զոր կատարեց մինչեւ
ուժէ իյնալը: Կ'այցելէր տուները,
փրկութեան խօսքը կը տարածէր: Այժմ
իր սիրած Փրկչին հետ է, հանգչելով
իր բոլոր գործերէն:

Տիրոջ մխիթարութիւնը կը հայ-
ցենք Նորատունկեան և Քիւշիւքեան
ընտանիքներուն և միւս սգաւոր պա-
րագաներուն:

Օրհնեալ ըլլոյ սուրբերուն յիշա-
տակը: ՏԱՆԵՐԷՅԸ

ուստի անկարելի է հպանցիկ յիշատա-
կութիւններ չընել հոս:

Երուսաղէմի շրջակայքը Բենեա-
մինի ցեղին տրուած հողամասն է: Քա-
ղաքին 6 ք.մ. հեռաւորութեան՝ կը
գտնուի Իսրայէլի առաջին թագաւոր
Սաւուղի ծննդավայրը՝ Գաբաա և
Սամուէլ մարգարէին գործունէութեան
դաշտը (Ա. Թագ. Ժ—ԺԳ գլուխներ):
Տասնեակ մը ք.մ. տնդին կը գտնուի
Ռամա՝ Սամուէլի ծննդավայրը, յետոյ
Բեթել և Մասաբա ո՛ւր կ'երթար Սամ-
ուէլ դատելու համար ժողովուրդը: Ըն-
թերցողը թերեւս կը յիշէ թէ Բեթել
նաեւ յիշուած է Գիրք Ծննդոց ԺԲ.ԺԳ
գլուխներուն մէջ: Այնտեղ էր որ Աբ-
րահամ իր վրանը բացաւ Յակոբ տե-
սաւ սանդուխ մը՝ ծայրը մինչեւ եր-
կինք հասած: Ժիշդ այս տեղերը Պե-
րէլ ըստած տեղ մը կայ, որ կը կար-
ծուի թէ Յիսուսի ծնողքը, գինքը՝ չի
գտնելով ետ Երուսաղէմ դարձան: Ե-
րուսաղէմէն 37 ք. մ. հեռաւորութեան
վրայ դէպի Կիւսիս, կը գտնուի Սելու-
վը, հանգստավայրը տապանակին, Բա-
նանու երկրին նուաճումէն ետքը:

Այժմ մօտաւորապէս 60 ք. մ. հե-
ռացած ենք Երուսաղէմէն: Մեր աջ
կողմը՝ մօտակայ բլուրի մը վրայ մեծ
ժառի մը տակ կը հանգչին Ահարոն,
նղիազար և Փենեհեա մեծ քահանայա-
պետները, սպասելով հրեշտակապետին
վերջին փողին, արթննալու համար
իրենց երկարաշունչ քունէն: Զիրենք
տնհանգիստ ընել չենք ուզեր և կ'անց-
նինք, ահա մօտեցած ենք Սուքոյ, լե-
րան լանջին հաստատած երբեմնի քո-
ղաքը, այսօր աննշան գիւղ մըն է, իսկ
Յակոբի ջրհորը որ ձորի մը մէջ է,
մօտ Սուքարի ուշադրութիւն գրաւող
տեղ մըն է: Հոս էր որ Սամարացի
կիրն առանձնաշնորհումը ունեցաւ Տի-

րոջը հետ կենսական խօսակցութեան։
Ջրհորին բերանը եզերող մէկ կտոր
քարը ջրհորն չուաններով խորապէս
փորուած է ամէն կողմէ։ Կը կարծուի
թէ Յակոբին ժամանակէն մնացած քարն
է ատիկայ։ Հորը ունի 80 ոտք խո-
րութիւն և 9 ոտք լայնութիւն։ Այս-
տեղ բլուրի մը վրայ կը գտնուի Յով-
սէփին գերեզմանը։

Քիչ յետոյ մեր առջեւ կը տես-
նենք երկու լեռներ Գեփաղ և Բարե-
զին դէմ դիմաց, երկուքին միջեւ կայ
ամբիթատրոնի նմանող ընդարձակ տեղ
մը։ Հոս էր որ Իսրայէլի ժողովուրդը
նստած մտիկ ըրաւ Օրէնքէն անէծքի
և օրհնութեան խօսքերն յիշեալ Գե-
փաղ և Բարեզին լեռներէն։ Այժմ
այդ տափարակ տեղւոյն վրայ կոյ
Նապուլուս քաղաքը, հռչակաւոր հա-
մանունն օճառով։ Լսեցինք որ այստեղ
կան սակաւին հին Սամարացիներու
սերունդէն 170 հոգի (Յովհ. 4, 9) որոնք
տակաւին փորած կը մնան Մովսէսի
Հնգամատեանին և կը սօսեն հրէական
Պատէքը։ Այդտեղ C.M.S.ը ունի հի-
ւանդանոց մը և դպրոց մը։

Հիմա Երուսաղէմէն դէպի Նազա-
րէթ (140 ք.մ.) ճամբուն կէսը անցած
ենք և ահաւասիկ հասած ենք բլուրի
մը՝ որուն վրայ Ամրի հաստատեց Սա-
մարիա քաղաքը (Գ. Թագ. 16 : 24)։
Բլուրին աջ կողմը այժմ կայ Սեփաս-
տիա անուն գիւղ մը։ Իսրայէլի 10
ցեղերուն հռչակաւոր մայրաքաղաքէն
կը մնայ միայն աննշան գիւղ մը, կոր-
ծանում մեծ և ահռելի...

Քիչ մը անդին կը հանդիպինք
բերրի դաշտերուն, տեղ տեղ ցածկեկ
բլուրներով, որոնք լաւ արօտավայ-
րեր են հօտերուն։ Դոթայիմ է ա-
նունը այդ տեղւոյն, ուր Յովսէփ փըն-
տըռելու ելաւ իր եղբայրները, և

անգամ մըն ալ չվերադարձաւ իր ծը-
նողացը (Մնուշդ. 37, 15—36)։ Կ'անց-
նինք այս պատմական վայրերէն բա-
զում խորհրդածութիւններով, և քիչ
ետքը մեր կառքը կանգ կ'առնէ տեղ
մը որուն անունն է Ճէննին, սուրբ
գրային անունն է Ենզանիմ, յորդ
կանաչութիւն և առատ ջուր կայ և
յարձար վայր ճամբորդներուն հանգըս-
տանալու համար։ Այստեղէն է որ կը
սկսի ընդարձակ դաշտ մը ճամբուն եր-
կու կողմէն։ Այլեւս լեռ կամ բլուր
չտեսնուիր։ Հարթ ճամբայ մը մինչեւ
այնտեղ ուրկէ կ'սկսի Գալիլեայի լեռ-
ները։ Սոյն լայնածաւալ դաշտը Յեզ-
րայելի դաշտն է։ Մակեդոնովը հոն է,
վայրը բազմաթիւ կատաղի և արիւ-
նալի պատերազմներու և հոտորածնե-
րու... Յայտ. 16, 16ին մէջ կոչուած
է Արմազեդուն որպէս վայրը, ուր մեր
Տէրը պիտի հաւաքէ իր թշնամիները
մեծ կոտորածի համար։

Յեզրայել ընդհանուր անունն է
դաշտին, որ Պաղեստինի ամենէն բեր-
րի և ընդարձակ կեդրոնական դաշտն
է։ Հոս էր որ Սաուղը Փղշտացիներէն
չարաչար պարտուեցաւ, Գեթէոն
մեծ և փայլուն յողթանակ տարաւ
Մադիանացիներուն վրայ։ Սոյն դաշ-
տին արեւելեան կողմը կ'իյնայ Թա-
փօր լեռը, արեւմտեան կողմը՝ Կարմե-
ղոս լեռը, հիւսիսէն Գալիլեայի լեռ-
ները և հարաւէն Սամարիայի լեռները
կան։ Ընթերցողը պէտք չէ չփոթէ
Յեզրայել անուն քաղաքը համանուն
դաշտին հետ։ Յեզրայել քաղաքին մէջ
Ախատըրը ունէր պալատ մը, որուն կից
կը գտնուէր Նաբովդի այգին, որուն
պատմութիւնը տես Դ. Թագ ԻԱ. գը-
լուխը։ Սոյն դաշտին մէջ էր Ենդով-
րը, ուր Սաուղ դիմեց վհուկի մը
(Ա. Թագ 28, 3—25)։ Յետոյ հոն էր

Նային քաղաքը, ուր մեր Տէրը կենդանացուց որբեւայրիին տղան (Ղուկ. 7:11—18):

Մօտեցած ենք Նազարէթին, որուն չհասած մեր կառքը կրկին կ'սկսի մագլցիլ լեռն ի վեր դարձդարձիկ ճամբաներով: Նազարէթը տեղաւորուած է 4 բլուրներու մէջտեղ, և մենք երբեք չգործածեալ գրուածին վրայ թէ «Զինքը բարձր տեղ մը տարին անկէ վար նետելու», որովհետեւ այսպիսի բարձր տեղեր շատ կան: Լկմբ բաւական մեծ քաղաք մըն է Նազարէթ, միախոնարական հաստատութիւններով օժտուած: Նազարէթէն մօտ 8 ք. մ. անդին ծննդավայրն է Յովնան մարգարէին որ Գեթթըքերա կոչուած է Դ. թագ. 14:25ին մէջ, սակայն տեղացիք Նեպի Յուճիս անուանով կը յիշեն տեղը: Քիչ անդին հանդիպեցանք ուրիշ պատմական քաղաքի մը՝ որ Կանա կ'ըսուի Աւետարաններու մէջ, ուր մեր Տէրը կատարեց իր առաջին հրաշքը, փոխելով ջուրը գինիի, այժմ կը կոչուի Քաֆր Քէննա: Շատ չանցած աչքերուն կ'երեւի միապաղաղ լիճը Գալիլեայի եր 682 ոտք ցած է ծովու մակերեսէն: Մեր կառքը կ'իջնէ արագ արագ և մեզ կը հասցնէ Տիրբրիա քաղաքը, որ ծովուն եզերքը շինուած է, Հերովդէս Անդիպատի կողմէ Տիրբրիոս կայսեր անունով և յիշատակին և ծովն ալ սոյն անունը կը կրէ այժմ: Մովը հիւսիսէն հարաւ մօտ 22 ք.մ. երկայնութիւն ունի, և 6—10 ք.մ. ալ լայնք մը:

Քիչ մը հանգստացանք Տիրբրիա պանդոկին մէջ և ճաշեցինք, յետոյ շեգեմակոյկ մը վարձելով այցելութիւն մը տաւինք Բեղսայիդա և Կափառնայում քաղաքներուն, որոնք ա-



'ՀԱԿԱՌԱԿ ՈՐԴԻՆԵՐ'

Գլուխ է

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Սըր էտուըրտ ալեւս չխօսեցաւ Քիչ մը կենալէ յետոյ պզտիկը շարու-նակեց:

Անցեալ օր Տիկին Մաքսուէլի կը հարցնէի թէ լաւ հագուստ ունի՞ր Թոմի հոմար, և ինք զիս վերի յարկը տարաւ իր պզտիկ սենեակը և երկար պահարան մը բանալով ըսաւ որ ներս

ւերակ են այժմ: Մեր Տիրոջ կարգացած վայելքը այս քաղաքներուն վըրայ տառացիօրէն իրականացած են: Հաճելի սարսուռներ կ'զգայինք մեր մէջէն անցնող, երբ եզերքին շատ մօտէն կ'երթայինք դէպի երկու յիշալ քաղաքները: Հո՞ս էր կամ հո՞ն արդեօք որ մեր Տէրը նաւակի մէջ նստած կը խօսէր բազմութիւններուն: Ո՞ր վայրն էր արդեօք ուր մեր Տէրը յաճախ ճամ կուգար, և օր մըն ալ հանդիպեցաւ Կափառնայումցի և Բե-սայիդացի ձկնորոններուն և զանոնք կանչեց իրեն հետեւելու: Գալիլեայի ծովեզերքը սրբազան խոհեր և յուշեր կ'արթնցնէ մարդուն մտքին մէջ:

Կափառնայումը դիրքով բարձր է բաղդատմամբ միւս քաղաքներուն, անկումն ալ աւելի մեծ և աւերածութիւնը աւելի ահռելի եղած է:

(Շար.)

Խ. Թ. Ս.

նայիմ, Հոն էին անոր կիրակնօրեայ մաքուր տափասան ու բաճկոնը և վերարկուն, մետաքսէ թաշկինակն ու փողկապը դեղին և կարմիր գիծերով, և ըստ թէ ինը տարիէ իվեր հող կը ապաստեն անոնք և ամէն շաբաթ օր կը թօթվէ ու կը խոզանակէ զանոնք: Չփախաւ ան իր լաւագոյն հագուստով, հաս ձգեց, ուստի պատրաստ կը մնան: Միակ բանը որ կը պակսի մատանին է»

— Ինչը, հարցուց Սըր Էտուըրտ՝ խնդալով:

— Մատանին, պատասխանեց Միլի եռանդով: Մաքսուէլ պարտաւոր է ըսել, Մատանի դրէք անոր ձեռքը և կօշիկներ՝ անոր ոտքերը: Տիկին Մաքսուէլ զոյգ մը կակոռղ բապուճ ունի, բայց չեմ ուզեր որ զրկուի անոնցմէ: Ուստի փնտռեցինք ու գտանք ուրիշ զոյգ մը որ քիչ մը փոքր է Մաքսուէլի համար և ես ինքս դրի պահարանին մէջ: Տիկին Մաքսուէլ կ'ըսէ թէ մատանի չուզեր, և թէ Սք, Դրոց մարդիկը տարբեր կը հագուէին, Թոմի տղաբաթի գուակ է. պէտք չունի հարուստի պէս երեւնալու: Բայց ես չեմ գիտեր, չեմ սիրեր խորհիլ թէ մատանի չունինք: Մօրեղբայր չունի՞ր դուն հատ մը որ անոր տանք:

Սըր Էտուըրտ գլուխը ետ տորաւ բարձրուն վրայ և խնդաց բարձրաձայն: Յետոյ Միլիի խոռոված դէմքը տեսնելով ըսաւ.

— Սպասէ մինչեւ քոյ Թոմի, բաւական ժամանակ կայ մատանի ձորելու համար, թէեւ ես մօրը համակարծիք եմ թէ մատանի պէտք չէ:

— Վերցնել տուած ես պատկերը զոր քեզի տուի, ըսաւ իր սուր աչքերը սենեակին չորս կողմը պտտցնելով: Ոչ, պատէն կախուած է: Լաւ է հող:

Կրնաս անկողնէդ տեսնել, Չե՞ս սիրեր անոր նայիլ: Երջանիկ չընե՞ր քեզ:

— Չեմ կրնար ըսել թէ կ'ընէ, պատասխանեց Սըր Էտուըրտ, պատկերին նայելով: Ինչո՞ւ զիս երջանիկ պիտի ընէ:

— Աղուոր է մտածել թէ այնչափ ժամանակ հեռու կենալէ յետոյ հիմա կը վերադառնայ: Արդեօք ո՞րչափ ատենէ իվեր կը քալէ: Աստուծոյ անառակ որդիներուն ո՞րչափ ժամանակ պէտք է Արտուծոյ դառնալու համար, մօրեղբայր:

— Երկար ժամանակ, կարծեմ, ըսաւ Սըր Էտուըրտ ծանրութեամբ:

— Բայց ո՞րչափ: Երկո՞ւ օր թէ վեց ժամ կամ մէկ շաբաթ:

— Կարծեմ այդ կախում պիտի ունենայ անոնց ո՞րչափ հեռու մնացած ըլլալէն:

— Բաւական դժուար է հասկնալ, ըսաւ Միլի յօնքերը կնճռոտելով: Որովհետեւ Աստուած ամէն տեղ է, չէ՞. ես կը կարծեմ թէ ինք ամէն տեղ մօտ պիտի ըլլայ անոնց: Դայեակին հարցուցի այս մասին և ըսաւ թէ Աստուած անոնց մօտ է, միայն թէ անոնք բուն մը չեն ըսեր անոր, և գէշ բաներ կ'ընեն և իրենց սիրտը Տէր Յիսուսի դէմ կը գոցեն և Սատանան ներս կ'առնեն: Աստուած ալ կ'ստիպուի թողուլ զիրենք մինչեւ զղջան: Երբ անոնք ըսեն, Հայր. մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, և ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու, անմիջապէս Աստուած իր թեւերը կը բանայ, կը ներէ անոնց ու կ'ընդունի նորէն: Այնպէս չէ՞, մօրեղբայր:

— Հոս նայէ, կարծեմ, բաւական խօսեցանք այս նիւթին վրայ: Ուրիշ բանի մը վրայ խօսէ:

Սըր էտուըրտ նեղուածի շեշտով
խօսեցաւ: Միլիի լեզուն խկոյն հնա-
զանդեցաւ:

— Դայեակը կ'ըսէ թէ այսօր այն
չափ ցուրտ է որ ձիւն պիտի գայ,
կ'երեւի Պիտի գոմ, մօրեղբայր: Գե-
տին քով բաւական մուխ կայ, դոյ-
եակը կ'ըսէ թէ մառախուղ է: Չեմ
գիտեր թէ սերկէ՛ եկաւ. կը կարծեմ
թէ Աստուծոյ շունչն է:

Մինչ այսպէս կը շաղակրատէր,
դուռն յանկարծ զարնուեցաւ և այցե-
լու մը երեւցաւ:

— Քեզ փնտռեցի, լսելով որ հի-
ւանդ ես: Վա՛յ, բաւական ալ ծանր:
Գիշեր մը, երկու, կ'ընդունի՞ս զիս
հիւր: Կարծեմ զուարթ ընկերութեան
քիչ մը կարօտ ես:

Հազարապետ Լըվէլ— քանզի ինքն
էր,— արագ արագ խօսելով մօտեցաւ և
իրական մտահոգութեամբ գիտեց Սըր
էտուըրտի փոխուած դէմքը:

— Շատ ուրախ եմ քեզ տեսնելով
ըսաւ վերջինը սրտանց, իր ձեռքը ա-
նոր երկարելով: Եկուր, կեցի՛ր ո՛ր-
չափ կ'ուզես. ձանձրացայ տուանձնու-
թեանէս:

— Եւ ա՛յս է այն պզտիկ հիւրը,
որ անսկիւնկալ վերպով եկաւ երբ հոս
էի ես վերջին անգամ, հարցուց Հա-
զարապետ Լըվէլ, Միլիի նայելով, որ
հանդարտ նստած էր խոշոր տիտեին
վրայ և նորեկը կը գիտէր սեւ խոշոր
աչքերով:

— Այո, ըսաւ Սըր էտուըրտ ա-
ղօտ ժպիտով մը՝ յիշելով այն սարսա-
փը, զոր զգաց անոր ժամանման ա-
տեն: Այսօր ինծի հոգ կը տանի:

Միլի իր փոքրիկ ձեռքը երկըն-
դուց դբսուհիի վայել շնորհալիւս-
թեամբ:

— Կը յիշեմ ձեզ ըսաւ, իմ վրաս

խնդացողներէն մէկն էիք:

— Չեմ կարծեր որ այդպիսի կոչ-
տութիւն մը ըրի:

— Հիմա կարծեմ կրնաս մեկնիլ,
ըսաւ Սըր էտուըրտ, և ըսէ զայնուկին
թէ ես զանգակ կը զարնեմ, երբ իրեն
պէտք ունենամ:

Միլի հնազանդեցաւ և զայնուկին
յոյս յայտնեց թէ «նորեկ պարոնը»
հեռու պիտի չպահէ զինք մօրեղբայ-
րէն: «Ինչու որ, գիտե՛ս, աւելի կը
սիրեմ մօրեղբայրը, երբ հիւանդ է:
Շատ տխուր կ'երեւի, և մեղմ կը խօ-
սի: Երանի թէ ամէն օր իր քով նըս-
տիմ:

Հազարապետ Լըվէլ Սըր էտուըր-
տի հեռուէն մէկ զարմիկն էր և ջերմ
բարեկամ էին իրարու: Անոր ձայնն
իսկ կը թուէր օգուտ ընել հիւանդին:
Միլի ուրախ եղած որ մօրեղբօր հիւ-
րը ոչ միայն ուշադրութեամբ մտիկ
կ'ընէր իր սիրական խաղերուն ու զը-
ւարճութիւններուն նկարագրութեան,
այլ և կը պնդէր մասնակցիլ իր խաղե-
րուն: Խաղաղ ապարանքին պատերը
դարձեալ թնդացին ծիծաղի և ցնծու-
թեան ձայներով զոր տարիներէ իվեր
լսած չէին:

Վերը հիւանդին սենեակին մէջ
Հազարապետ Լըվէլ սքունչ խօրէն համ-
բերող ու ճարտար հիւանդապահ մը ե-
ղաւ: Բայց երբեմն ամբողջ իր զը-
ւարթութեամբ չէր յաջողեր փարա-
տել հիւանդին տխրութիւնն ու սրտնե-
ղութիւնը:

Առաւօտ մը Հազարապետ Լըվէլ
հիւանդին սենեակէն վար եկաւ մեծ
մտատանջութեամբ: Սրահին մէջ նըշ-
մարելով որ Միլի գլխարկ դրած և
բռնկոն հագած է, հարցուց:

— Դուրս կ'ելլէք զայնուկին հետ:

— Ոչ, զայնակը զբաղած է, ես

առանձին կ'երթամ ծառուղին, Ֆրիցի հետ: Դուռն ալ եկուր:

Հաղարարպետն հաւանեցաւ, բայց սովորականէն աւելի լուրջ դէմքով, յետոյ յանկարծ ըսաւ, իր մտածումներէն դրդուելով.

Կարծեմ, մօրեղբայրդ միտքին մէջ հոգ մը ունի: Իր քանի մը խօսքերէն կը հետեւեցնեմ թէ սկսած է բարեպաշտ ըլլալ:

— Բարեպաշտն ի՞նչ է, հարցուց իսկոյն Միլի:

— Բարեպաշտն իրմէ զատ ամէն անձ չար կը կարծէ, և իր շուրջ ամէն անձ ու ամէն բան կը դատապարտէ: Շատ զզուելի է. աղջիկս, նայէ որ դուռն այն ճամբուն չհետեւիս: Եւ ամենէն դէշը այն է որ չես կրնար ճնշել զինք, ո՛րքան ալ աշխատիս:

— Եւ էտուըրտ մօրեղբայրս այդպէ՞ս պիտի ըլլայ, հարցուց պզտիկը շուարուն դէմքով:

— Ձերմապէս կը յուսամ թէ ոչ: Բոլոր կրցածս պիտի ընեմ որ չըլլայ:

— Ի՞նչ կ'ընեն բարեպաշտները, հարցուց Միլի:

— Ինչ կ'ընեն՝ Տետրուկ կը ցըրուեն, երգ կ'երգեն և աղուոր կազմով Սուրբ Դիրք բռնած խոժոր գէմքեր կը պտտցնեն:

— Ես կը սիրեմ երգ երգել, ըսաւ Միլի եռանդով: Ամէն մարդ կ'երգէ Ածտուծոյ: Ես երբեմն թռչուններուն մօտիկ կ'ընեմ և կը փափաքիմ անոնց պէս երգել: Ծառերը կ'երգեն, մեղունները և ճանճերն ալ: Ամառն ամէն բան կ'երգէ դուրսը, բայց հիմա գրեթէ ամէնը կը քնանան մինչեւ գալ տարի: Դուռն ի՞նչ երգ կ'երգես, Հաղարարպետ Լըվէլ:

— Զորմա՛նք. դուռն ի՞նչ կը կարծես զիս, աղջիկ, պատասխանեց ու

խնդաց: Յետոյ աչքերը փայլեցնելով շարունակեց. ես պիտի ըսեմ թէ դուռն բարեպաշտ ես, եթէ հոգ չտանիս: Երգ երգելէ դատ ուրիշ ի՞նչ կ'ընես:

— Սուրբ Դիրք մը ունիմ, ըսաւ Միլի լրջօրէն, և շատ կը սիրեմ:

— Եւ ինչո՞ւ կը սիրես այդ ցամաք գիրքը: Բառ մը չես հասկնար անկէ:

— Կը հասկնամ, Հաղարարպետ. գեղեցիկ է, կը սիրեմ երբ դայեակս ինծի կը կարդայ: Յիսուսի վրայ կը խօսի, գիտես, և կը սիրեմ Յիսուսը, ինք ալ զիս կը սիրէ: Եւ ի՞նչ աղուոր պատմութիւններ կան անոր մէջ:

Հաղարարպետը սուլեց պահ մը մեղմով:

Յետոյ, գլուխը քովի պզտիկ աղջկան կողմ երեքցնելով կատակերգակօրէն, ըսաւ. «Շատ կը վախնամ որ դուռն ես այս բոլոր բանին պատճառը: Սբ. Դիրք կը կարդա՞ս մօրեղբորդ: Կ'ըսե՞ս անոր թէ իր կեանքը պարտապանաբար վատնած է, և չէ կատարած այն նպատակը որու համար ստեղծուած էր, թէ ինք չար մեղաւոր է: Վասնզի այդ էր այս առաւօտ անոր խօսքերուն ամփոփումը:

— Էտուըրտ մօրեղբայրս շատ բարի մորդ է, պատասխանեց Միլի փութով: Ձեմ գիտեր ի՞նչ ըսել կ'ուզես, Հաղարարպետ: Դուռն չե՞ս կարդար Սբ. Դիրք:

— Ի՞նչ պիտի խորհիս եթէ ոչ ըսեմ:

— Թերեւս գոց գիտես, պիտի խորհիմ:

— Իսկ ես կ'ըսեմ, ոչ, չեմ գիտեր: Պէտք չէ որ սկսիս խստիւ հարցափորձել զիս: Ո՞վ մեծցուց քեզ բարեպաշտական այս դրութեամբ:

— Ես բարեպաշտ չեմ — դուռն

ըսիր թէ սոսկալի մարդիկ են անոնք։
Բայց ես կը կարծէի թէ բոլոր մեծե-
րը Սբ. Գիորք կը կարդան Ճէքի պէս։

— Ճէք ո՞վ է։

— Անառակ որդի մը, Աստուծոյ
անառակներէն մէկը։

— Եւ ի՞նչ կ'ընեն անոնք։

Միլի չպատասխանեց պահ մը։ Յե-
տոյ շատ ծանրութեամբ դարձուց աչ-
քերը Հազարապետին և ըսուե, կար-
ծեմ դուն ալ անառակ որդի ես։ Էտ-
ուըրտ մօրեղբայրս ըսաւ թէ հարուստ
անառակներ ալ կան։ Աստուծոյ հե-
ռացած ես, Հազարապետ Լըվէլ։

— Եկուր, եկուր, ըսաւ Հազարա-
պետը զուարթութեամբ սեղմելով
անոր երեսը։ Երբ ես պտոյտի ելայ
քեզի հետ, այսպիսի բանի չէի սպասեր։
Քարոզներդ ուրիշի մը պահէ։ Ախռոն
եկուր ինծի հետ և ձի հեծնել տամ
քեզի։

Մէկ րոպէէն անհետացաւ Միլիի
լրջութիւնը, և քիչ յետոյ սկսաւ ու-
րախ զուարթ խնդալ՝ շագանակագոր-
ջն մատակ ձիով մը դրոթելով ախռոն
գաւթին մէջ։ Բայց երբ տուն գնաց,
դայեակին ըսաւ.

— Հազարապետ Լըվէլ շատ հա-
ճելի և շատ զուարճալի մարդ է,
բայց միշտ չեմ հասկնար անոր խօս-
քերը, խրթին բաներ կ'ըսէ։

Դիուխ Ը.

ԵԼԱԻ, ԻՐ ՀՕՐԸ ԵԿԱԻ

Հազարապետ Լըվէլ շարաթ մը
կեցաւ։ Սըր էտուըրտ կարծես անոր
ընկերակցութենէն օգտուեցաւ մարմ-
նական առողջութեան տեսակէտով։
Սակայն սրտով շատ խեղճ էր։ Զոր-

միկին ազդեցութիւնն ալ անոր հան-
գիստ առողջ տեսակէն չէր։

«Հիմա, բարեկամս, շուտ աղէկ-
ցիր, պարապ բաներ մի մտածեր, և
մեզի եկուր Ծնունդին։ Առանձնու-
թենէդ մեկամաղձոտ կ'ըլլաս։»

Ասոնք էին Հազարապետ Լըվէլի
վերջին խօսքերը, և Սըր էտուըրտ
պատասխանեց. «Ոչ, ոչ, շնորհակալ
եմ։ Զեմ գիտեր թէ մինչեւ այն փոքր
պիտի կրնամ ելլել սենեակէս։ Երա-
խայի չափ անզօր եմ դեռ։»

Ծնունդի շաբթուն Սըր էտուըրտ
իր թիկնաթոռին մէջ էր գրատունը,
և թէեւ տակաւին տկար էր, արագ
կ'ապաքինէր։ Բոցավառ կրակի մը
առջեւ կը մտածէր յօգուածի մը վրայ
զոր նոր գրած էր, և ահա դուռը
զարնուեցաւ։ Երբ եկողը տեսնելու հա-
մար դրան կողմ դարձաւ, դէմքին
վրայ խոտոռութիւն մը եկաւ, բայց
անմիջապէս փարատեցաւ վարդազոյն
այտերով քեռաղջկան առջեւ, որ
դուրսի հագուստով հեւ ի հեւ եկաւ
խոշոր խուրձ մը մշտադալար տերեւ-
ներ գրկած։

— Մօրեղբայր, եկա՞մ է։

— Ո՞վ եկած է։

— Թոմին եկած է, իրօք, Ֆորտն
ըսաւ ինծի, երբ դայեակին հետ առն
կը մտնէի։ Ինք Հերիսէ լսեր է, Հե-
րիս ալ բուն Մաքսուէլէ։ Տղան եկաւ,
ըսէ օրիորդին, ըսեր է։ Ֆորտ կ'ըսէ
թէ Հերիս ըսեր էր որ կարծես կը
ցատկէր ուրախութենէն։ Ա՛խ, մօր-
եղբայր սնոնց երթա՞մ։ Դայեակը կ'ը-
սէ թէ շատ ուշ է, բայց ես շատ կ'ու-
զեմ հոն ըլլալ։ Այնչափ գործ կայ ը-
նելու հիմա որ եկած է։ Մօրեղբայր,
կրնամ ազարակին գէր կովերէն մէկը
մորթել։ Հորթ չկայ կարծեմ։ Հրա-
մամ ունիս, մօրեղբայր։ Երթամ ը-

սեմ այդպէս՝ կը զրկես զիս չէ՞:

— Անշուշտ ոչ, խիստ ուշ է քեզի համար. միջնելու վրայ էլ Գալով կենդանիներէս մէկուն մորթուելուն, բընաւ հաճութիւն չունիմ:

Միլի աչքերն արցունքով լեցունեցան: Իզուր փորձեց զոպել զանոնք, երբ մօրեղբայրն այս ոճով խօսեցաւ. Ինք գիտէր թէ անօգուտ է առարկել:

— Անոնք առանց ինծի պիտի ընեն խնջոյքը, ըսաւ հեկեկալով: Տիկին Մաքսուէլ ինծի խօսք տուաւ որ ես խնջոյքին ներկայ պիտի ըլլամ, և կ'ուզեմ տեսնել թոմին:

— Եթէ տիկին Մաքսուէլ քեզի խօսք տուաւ, ուրեմն վաղուան պիտի ձգէ խնջոյքը, ըսաւ Սըր Էտուըրտ աւելի մեղմութեամբ: Հիմա լուրջ աղջիկ եղիր և համբերութեամբ սպասէ մինչեւ ժամանակը գայ: Վատա՛հ պիտի որ անոր ծնողքը պիտի ուզեն առաջին գիշերը առանձինն մնալ անոր հետ: Վազէ գնա հիմա, չեմ ուզեր խանգարուիլ:

Միլի սենեակէն դուրս սպրդեցաւ շատ նկուն զգալով: Դիչ յետոյ իր սենեակին վառարանին առջեւ փռուած մորթին վրայ տարածուեցաւ երկու թեւով Ծրիցի փաթ թուած, ու ամբողջ պատմութիւնն ընկելով մխիթարուեցաւ: հանդիպումին տեղն ու վայրը երեւակայելով իր միտքն այնչափ լեցուած էր այս նիւթով, որ դայեակն այն գիշեր ուշ ժամանակ կրցաւ քնացնել զայն: Դռնը տաննէն առաջ անոր վերջին խօսքերն եղան, «Արդեօք ո՞վ պիտի նուագէ և պարէ»:

Հետեւեալ առաւօտ նախաճաշէն անմիջապէս յետոյ դայեակէն արտօնութիւն առաւ պահապանին տնակն երթալու սպասուհի Սարայի հետ: Ամ-

բողջ կէսօր բացակայ եղաւ, և ժամը մէկին տիկին Մաքսուէլի կողմէ մէկը եկաւ հարցնել թէ կրնա՞յ հոն ճաշի մնալ: Երեկոյեան չորսի ատենները միայն տուն բերուեցաւ յուզուած ու կարմրած, և երկարօրէն դայեակին պատմեց ինչ որ լսած ու ըրած էր:

— Հիմա, սիրելիս, անդադար խօսելու չես, ըսաւ դայեակը վերջապէս Սըր Էտուըրտ ըսաւ որ, երբ գաս, իրեն զրկեմ քեզ քիչ մը: Ուստի պէտք է որ կոկեմ քեզ նախ:

Բոլորովին մոլթ էր, երբ Միլի գրատուն մտաւ: Բայց փայլուն կըրակը անոր ցուցուց աթոռին մէջ ընկողմանած մօրեղբայրը, որ երազանքի մէջ ընկղմած էր:

— Ո՛ւր էիր ամբողջ օրը: Կարծեմ Մաքսուէլի գացիր:

— Այո, պատասխանեց Միլի հանդարտութեամբ: Ես քեզի պիտի պատմեմ, եթէ կ'ուզես: Նսիս հանգիստ նստի՞մ մէյ մը:

Վայրկեան մը վարանելէ յետոյ կրակին դիմացի թիկնաթուին վրայ ելաւ և աղուոր պատկեր մը ձեւացուց՝ գանգրալից գլուխը բարձին կրթնցընելով և ուշադրութեամբ իր մօրեղբոր երեսը նայելով:

— Աղուոր խօսակցութիւն մը պիտի ունենանք, մօրեղբայր: Այսպէս կ'ըսէ Մաքսուէլ, երբ ես ու տիկին Մաքսուէլ կը խօսինք կրակին առջեւ: Հիմա պատմե՛մ թոմի պատմութիւնը:

— Պատմէ, ըսաւ մօրեղբայրը զուարճանալով:

— Գիտես, այս առտու վազելով գացի, Սարա ալ ետեւէս կը վազէր: Երբ տիկին Մաքսուէլ զիս տեսաւ, դուռը վաղեց: Ծռնչա կտրած էր գրեթէ, ուստի գգուեց զիս քիչ մը: (Շար.)

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Վերելք» ամսաթերթը Յունվարէն իվեր սկսած է հրատարակել Ֆրանսա Յատկապէս հայ պատանեաց եւ երիտասարդաց համար է։ Սոյն թերթը զուտ հոգեւոր է եւ համոզումներով՝ վստահելի։ Այնպէս ամէն ճիշդ կը թուի է երիտասարդութիւնը իրեն համար գրաւելու։ Եկեղեցիին անհոգ կեցուածքը ներելի չէ երիտասարդութիւնը իրեն կապելու խնդրոյն մէջ։ Ստիկա կարելի է միայն մէկ միջոցաւ։ — Բրիտտոսը ներկայացնելով անոնց՝ իր բոլոր գեղեցկութեանը մէջ։ Թերթը այս տեսակէտէն կարեւոր գործ մը կը կատարէ, հետեւաբար շնորհաւորելի է եւ արժանի քաջալերութեան։ Մենք ջերմապէս կը յանձնարարենք սոյն թերթը մեր երիտասարդ ընթերցողներուն։ Թողուածներուն մէկ մասը ֆրանսերէն է, այդ լեզուին ալ տեղեակ են մեր երիտասարդներէն շատերը։ Գինն է 2.50 տոյար։

Հասցէն է՝ A. Helvadjan, C.C.P. 914,04, Marseille.

ՆՈՒՒՐԱՏՈՒԹԻՒՆ

«ԱՆԵՏԱՐԱՆԻ ԶԱՅՆ»ԻՆ

Գահիրէի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Տիկնաց Միութիւնը կը նշուի 100 Ե.Դ. հանգուցեալ Օր. Վիգորիա Լեւոնեանի մահուան առաջին տարեկիցին առթիւ։

Քոյր Եւնիկէ Խոնկանեան 20 Ե.Դ. կը նուիրէ Սեյիթե Նորատուցեանի կսկիծալի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի։

Մեր շնորհակալութիւնները յարգելի նուիրատուներուն։

ԹԵՐԹԻՍ ՏԱՐՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ Է

Եղիպտոսի համար	40 Ե.Դ.
Սուրիոյ եւ Լիբանանի համար	350 Ս.Դ.
Ամերիկայի համար	2.50 Տոյար
Շիլին գործածուած տեղերու համար	8 Շիլին

Հատը ձեռքէ՝ 5 Եղիպտ. Դաւեկան

Մեր ընթերցողներէն կը խնդրուի նկատել ունենալ սոյն փոփոխութիւնը

 ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. Կը խնդրուի որ բոլոր բարակցութիւններ յօդուածներ եւ դրամական առաւումներ ղրկուին հետեւեալ հասցեով.

K. T. SARIAN

American Mission

Alexandria (Egypt)